

հ-30

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅՐՈՒՄԻ ԱՇՈՏ ՆՈՐԱՅՐԻ

ԴՐ. ՅՈՂԱՆՆԵՍ ԼԵՓՍԻՈՒՄԻ «ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ  
ԱՐԵՎԵԼՔՈՒՄ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՆՊԱՍՏ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Է.00.02 - «Ընդհանուր պատմություն» մասնագիտությամբ պատմական  
գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման  
ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ 2003

08

Ատենախոսության թեման հաստատվել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի խորհրդում:

*Handwritten notes in blue ink:*  
22.05.03.  
Գիտնական խորհրդակցություն  
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԳԱԱ ակադեմիկոս  
Լ. Ա. ԽՈՒՐՇՆՈՒԴՅԱՆ  
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԳԱԱ ակադեմիկոս  
Վ. Ա. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ  
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԳԱԱ ակադեմիկոս  
Վ. Ա. ԴԻԼՈՅԱՆ  
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԳԱԱ ակադեմիկոս  
Լ. Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ  
ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

**ԳԻՏՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԱԿՑՈՒՄ**

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԳԱԱ ակադեմիկոս  
**Լ. Ա. ԽՈՒՐՇՆՈՒԴՅԱՆ**

**ՊԱԵՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱՆՈՍՆԵՐ**

- Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԳԱԱ ակադեմիկոս  
**Վ. Ա. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**
- Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
**Վ. Ա. ԴԻԼՈՅԱՆ**
- Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
**Լ. Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ**

**ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

Խ. Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական համալսարանի Ընդհանուր պատմության ամբիոն

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2003 թ. հունիսի 23-ին ժամը 13<sup>00</sup>-ին ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում գործող 006 Ընդհանուր պատմության մասնագիտական խորհրդի նիստում /Չասցե՝ 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24 Գ./:

Ատենախոսության հետ կարելի է ծանոթանալ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտական կաբինետում:

Սեղմագիրն առաքված է 2003 թ. մայիսի 23-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, պատմական գիտությունների թեկնածու *Միքայել* Պ. Ա. ՉՈՐԱՆՅԱՆ

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

**ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:**

Ատենախոսությունում առաջին անգամ գիտական համակողմանի քննության է ենթարկվում և ամբողջականորեն լուսաբանվում է դր. Յոհ. Լեփսիուսի և նրա «Գերմանական առաքելություն Արևելքում» ընկերության երկարամյա հայանպաստ գործունեությունը: Եթե նկատի առնենք, որ համագործակցության, պայքարի և ձեռքբերումների մի ամբողջ դարաշրջան բեկոլ և աշխարհագրական խիստ լայն ընդգրկմամբ հատկանշվող այդ առաքելությունն իրագործվեց հայ ժողովրդի համար մեծագույն կորուստներով և ողբերգություններով հատկանշվող ժամանակաշրջանում, որոնք միջազգային հանրության կողմից դեռ միանշանակ գնահատական ստացած չլինելով՝ ներկայումս էլ գերծ չեն նենգափոխումներից, ապա ակնհայտ կդառնա, որ խոսքը վերաբերում է մերձավորարևելյան և հայոց նոր պատմության տակավին մութ մնացած էջերից մեկին, որի լուսաբանումն ունի ոչ միայն գիտական, այլև քաղաքական կարևոր նշանակություն և արդիական մեծ հնչեղություն: Ներկայացված հարուստ փաստագրական նյութերի միջոցով աշխատությունը կարող է զգալի նպաստ բերել ոչ միայն հայոց ցեղասպանության ուսումնասիրման, այլև վերջինիս ճանաչման և Հայկական հարցի արծարծումների նորոտյա գործընթացներին՝ միաժամանակ հնարավորություն ընձեռելով օտար աղբյուրների հիման վրա հերքելու այդ շրջանի պատմական իրողությունների վերաբերյալ թուրքական պատմագիտության և այլոց կողմից կատարվող կեղծումները: Յոհ. Լեփսիուսի և նրա ընկերության առաքելությունը դարակազմիկ նշանակություն ունեցավ հայ-գերմանական փոխհարաբերությունների պատմության մեջ, և ներկայումս, երբ հայ ժողովուրդը դարձյալ հնարավորություն է ստացել կերտել իր անկախ պետականությունը, այդ առաքելության լուսաբանմանը նվիրված ուսումնասիրությունը խթանիչ դեր կխաղա նաև երկու ժողովուրդների մերօրյա կապերի ամրապնդման ու զարգացման հարցում: Աշխատությունը կարող է ծառայել նաև որպես արժեքավոր ուղեցույց և աղբյուրագիտական ձեռնարկ հայ-գերմանական պատմամշակութային և քաղաքական փոխհարաբերություններով ու հարակից հարցերով զբաղվող պատմաբանների համար: Միաժամանակ այն հնարավորություն է ընձեռում ճշգրտել և ուղղել գերագանցապես սիրողական աղբյուրների և ոչ գիտական գրականության միջոցով ի հայտ եկած ու ներկայումս էլ ավանդաբար գոյատևող մի շարք թյուրըմբռումներ առանձին կարևոր պատմական իրադարձությունների կամ գործիչների վերաբերյալ:

**ՉԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ:**

Ժամանակագրական առումով ատենախոսությունն ընդգրկում է 1895-1943 թթ. ընկած ժամանակահատվածը, չնայած ատենախոսությունում հիշատակված որոշ փաստեր և իրադարձություններ դուրս են ժամանակագրական այդ շրջանակներից:

**ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ:**

Զնայած Լեփսիոս հրապարակախոսի և հասարակական-քաղաքական գործչի հանդեպ հայ և արտերկրի գիտական շրջաններում շարունակ ի հայտ եկած հետաքրքրություններին, նրա և նրա ընկերության երկարամյա հայանպաստ գործունեությունն առայսօր հիմնականում մնացել է չուսումնասիրված,<sup>1</sup> և մեր ուսումնասիրությունն այդ իմաստով լրացնում է պատմագիտության մեջ տեղ գտած բացը: Լեփսիոսի և նրա կազմակերպության գործունեության լուսաբանումը կատարվում է դարաշրջանի աշխարհաքաղաքական զարգացումների հենքի վրա: Ատենախոսությունում առաջին անգամ գիտական հանգամանակից քննության են ենթարկվում ինչպես ընկերության մասնաճյուղերում կազմակերպված համապարփակ փրկարար աշխատանքներն, այնպես էլ Գերմանիայում և եվրոպական այլ երկրներում Լեփսիոսի և նրա աշխատակիցների կողմից իրականացվող հայանպաստ կազմակերպական և քարոզչական գործունեությունը: Ընդ որում ըստ որոշակի ժամանակափուլերի Գերմանիայում և մասնաճյուղերում կատարված աշխատանքները լուսաբանվում են գուզահեռաբար, որ օգնում է ոչ միայն պահպանել դրանց ժամանակագրական հաջորդականությունը, այլև հնարավորինս ընկալելի դարձնել երկուստեք տեղի ունեցող զարգացումների փոխառնչություններն ու

<sup>1</sup> Պատմագիտության կողմից նախկինում առավելապես ուսումնասիրության առարկա են դարձել Լեփսիոսի առանձին փոքրաթիվ հրապարակումներ, որոնք հիմնականում լինելով փաստաթղթերի կամ փաստագրական նյութերի ժողովածուներ (Armenien und Europa. Eine Anklageschrift wider die christlichen Großmächte und ein Aufruf an das christliche Deutschland, Berlin, 1896; Deutschland und Armenien 1914-1918. Sammlung diplomatischer Aktenstücke, Potsdam, 1919; Der Todesgang des Armenischen Volkes, Potsdam, 1919), գեթ չնչին իսկ պատկերացում էին կարող տալ նրա և նրա ընկերության վիթխարածավալ հրապարակախոսական ու կազմակերպական գործունեության մասին: Այն մասնակի քննության է ենթարկվել միայն դր. Ու. Ֆայզելի՝ 1989 թ-ին Գյոթինգենում հրատարակված «Das evangelische Deutschland und Armenien» գրքում, որը, սակայն, նպատակ ունենալով ի մի բերել Դայաստանի հետ գերմանական ավետարանական շրջանների փոխառնչությունների ընդհանուր պատմությունը, թե Լեփսիոսի և թե նրա ընկերությունների գործունեությանն անդրադառնում է թռուցիկ և հատվածաբար: Որևէ այլ՝ թիչ թե շատ ընդգրկուն ուսումնասիրություն, հակառակ բավականաչափ սկզբնաղբյուրների առկայությանը, առայսօր դեռ չի կատարվել:

ներքին պատճառահետևանքային կապերը: Ատենախոսությունում ներկայացված բազմաթիվ փաստեր և պատմական եղելություններ, առաջին անգամ դրվելով գիտական շրջանառության մեջ, հնարավորություն են ընձեռում կատարել միանգամայն նոր գիտական եզրահանգումներ: Թեմայի շրջանակներում փաստավավերագրական ստույգ աղբյուրների հիման վրա հանգամանակից պարզաբանում են ստանում նաև թուրք-գերմանական դիվանագիտական և ռազմաքաղաքական փոխհարաբերություններին առնչվող մի շարք խնդիրներ, որոնց իմացությունը կարևոր նշանակություն ունի Դայկական հարցի և հայոց ցեղասպանության ուսումնասիրման խնդրում:

**ՉԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ:**

Ատենախոսության նպատակն է համակողմանիորեն լուսաբանել դր. Յոհ. Լեփսիոսի և նրա՝ «Գերմանական առաքելություն Արևելքում» ընկերության երկարամյա հայանպաստ գործունեությունը: Դրա իրագործման ճանապարհին ատենախոսի կողմից առաջադրվել են հետևյալ հետազոտական խնդիրները.

1. Լուսաբանել հայանպաստ հասարակական կարծիքի ձևավորման, Դայկական հարցի արդարացի լուծման, Դայաստանում տիրող իրադրության վերաբերյալ ճշգրիտ իրազեկում ապահովելու և օգնության աշխատանքների զարգացման համար անհրաժեշտ նյութական միջոցների հայթայթման նպատակով Լեփսիոսի և նրա ընկերության կողմից Գերմանիայում իրականացվող կազմակերպական և քարոզչական գործունեությունը:

2. Դետազոտել հայ ազգային-քաղաքական կյանքում առկա կարևորագույն հիմնախնդիրների հանդեպ Լեփսիոսի կազմակերպության դիրքորոշումն, ինչպես նաև վերջինիս հայանպաստ գործունեության հիմնարար շարժառիթները՝ միաժամանակ քննության ենթարկելով այդ առթիվ առայսօր ի հայտ եկած ըմբռումները:

3. Ներկայացնել ընկերության՝ Մերձավոր Արևելքի տարբեր երկրներում հիմնադրված մասնաճյուղերի կողմից իրականացվող հայանվեր փրկարար աշխատանքները՝ պարզաբանելով նաև դրանց հիմնարար առանձնահատկություններն ու նշանակությունը հայ ազգային-հոգևոր կյանքում:

4. Ուսումնասիրել հայաստանյան և արտերկրի հայկական շրջանների հետ Յոհ. Լեփսիոսի և նրա աշխատակիցների համագործակցության բնույթը, ընդգրկումն ու հիմնական արդյունքները:

5. Լուսաբանել Գերմանիայի ներքաղաքական կյանքում տեղի ունեցող այն իրադարձություններն ու զարգացումները, որոնք որոշակի նշանակություն են ունեցել ընկերության կողմից իրականացվող՝

հայօգնության աշխատանքների համար: Կատարել նաև Գերմանիայի արտաքին քաղաքականությանը, թուրք-գերմանական դիվանագիտական և ռազմաքաղաքական փոխհարաբերությունների վերաբերող խնդիրների հանգամանալից պարզաբանում, որոնք առնչվում են ատենախոսության թեմային:

6. Ներկայացնել հայանպաստ աշխատանքների արդյունավետ կազմակերպման նպատակով գերմանական այլ կազմակերպությունների, անհատների, ինչպես նաև հայ ժողովրդի՝ ոչ գերմանացի բարեկամների հետ Լեփսիուսի ու նրա կազմակերպության համագործակցության հիմնական արդյունքները:

7. Զննության ենթարկել Լեփսիուսի մահից հետո նրա ընկերության կողմից իրականացված համապարփակ հայանպաստ աշխատանքները՝ զուգահեռաբար ներկայացնելով նաև Գերմանիայում իրագործված իրապարակախոսական գործունեությունն ու կազմակերպական նախաձեռնությունները:

8. Ուսումնասիրել ընկերության աշխատակիցների ծառայությունն ու վաստակը հայ-գերմանական կրթական և գիտամշակութային կապերի զարգացման ու ամրապնդման բնագավառում:

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԻՐԱՌՎԱՆ ՆՇԱՆԱՎՈՒԹՅՈՒՆԸ:** Աշխատանքն ունի որոշակի կիրառական նշանակություն: Այն կարող է օգտագործվել Մերձավոր Արևելքի առանձին երկրների նոր պատմությանը, հայ-գերմանական փոխհարաբերություններին, Հայկական հարցին, հայոց ցեղասպանությանը, թուրք-գերմանական դիվանագիտական և ռազմաքաղաքական փոխառնություններին վերաբերող բուհական դասընթացներում: Ատենախոսությունում կատարված հետևություններն ու եզրահանգումները, ինչպես նաև ներկայացված վավերագրերն ու փաստաթղթերը կարող են օգտագործվել ինչպես Մերձավոր Արևելքի, հայ-գերմանական փոխհարաբերությունների պատմությանը, այնպես էլ հայկական հարցին և հայոց ցեղասպանությանը վերաբերող ապագա ուսումնասիրություններում և ժողովածուներում:

**ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎՈՂ ԹԵՄԱՅԻ ԱՂՔՅՈՒՐՆԵՐԸ:** Մեր կողմից օգտագործված առավել կարևոր և ընդգրկուն սկզբնաղբյուրների թվում նախ անհրաժեշտ է հիշատակել դր. Յոհ. Լեփսիուսի և նրա ընկերության կողմից իրատարակված պարբերական մամուլը, որը բաղկացած է 1897-1943 թթ. ընկած ժամանակահատվածում հաջորդաբար, մասամբ, սակայն, նաև զուգահեռ լույս ընծայված՝ թվով 14 պարբերականներից: Դրանց թվում ժամանակային և, բնականաբար, նաև ծավալային առանձնակի լայն ընդգրկում ունեցան «Der Christliche Orient», «Der Orient» և «Orient im Bild» ամսագրերը, որոնցից առաջինը լույս է տեսել 1897 և 1900-1922, հաջորդ երկուսը

համապատասխանաբար 1919-1939 և 1927-1939 թվականներն ընդգրկող ժամանակահատվածներում, իսկ 1898-1999 թվականներին իրատարակվեց «Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes» ամսագիրը: Բացի այդ, առանձին ժամանակափուլերում լույս էին ընծայվում մի շարք այլ պարբերականներ ևս, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր առանձնահատուկ գործառույթը Լեփսիուսի և նրա ընկերության հայանպաստ աշխատանքների լուսաբանման հարցում: Ըստ այդմ, 1903 թվին իրատարակվում և հասարակական շրջաններին էր առաքվում «Ex Oriente Lux», 1903-1908 թթ.՝ «Der Stern der Weisen», 1917-18 թթ.՝ «Mitteilungen aus der Arbeit von D. Dr. Johannes Lepsius», 1925-26 թթ.՝ «Für unsere kleinen Armenierfreunde», իսկ 1929-1939 թթ.՝ «Der kleine Orient» ամսագիրը: Ընկերության պարբերական տեղեկատվությունը չդադարեց նույնիսկ երկրորդ աշխարհամարտի բռնկումից հետո ստեղծված առանձնակի ծանր պայմաններում: 1939 թ. այն իրագործվում էր «Mitteilungen an unsere Mitglieder und Freunde!» պարբերականի միջոցով: Հաջորդ երկու տարիների աշխատանքների լուսաբանման նպատակով 1941 թ. իրապարակվեց «Geschäftsbericht 1940/41 der Dr. Lepsius Deutschen Orient-Mission» տեղեկագիրը, իսկ 1943 թ-ին՝ ևս մի տեղեկագիր, որը դարձավ վերջինը և կոչվում էր «Geschäftsbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission 1942/1943»: Այդ ամենից գատ, 1898-1911 թթ. լույս ընծայվեց մեկ այլ ամսագիր ևս՝ «Das Reich Christi»-ն, որը չնայած հիմնականում նվիրված էր քարոզչական և գիտա-աստվածաբանական խնդիրների պարզաբանմանը, այդուհանդերձ կարևոր տեղեկություններ էր պարունակում նաև հայօգնության աշխատանքների վերաբերյալ:

Որպես ԳԱԱ-ի գաղափարախոսական, տեղեկատվական և քարոզչական գործունեության կազմակերպման կարևորագույն միջոց՝ հիշյալ պարբերականներն ունեին անփոխարինելի նշանակություն ընթացիկ աշխատանքների լուսաբանման, բարեկամների հետ կապի ամրապնդման և հասարակայնության համակողմանի իրազեկման հարցում: Այնտեղ կանոնավոր կերպով լույս էին տեսնում Լեփսիուսի և նրա գործընկերների հոդվածները, ընկերության՝ արտերկրի աշխատակիցների և բարեկամների թղթակցությունները, կատարվում էին իրադրության համակողմանի վերլուծություններ, տպագրվում էին փաստագրական, վիճակագրական տեղեկություններ, հաշվետվություններ, ուղեգրություններ, ակնարկներ և բազմաբնույթ ու բազմաժանր այլ ստվարաքանակ նյութեր, որոնք բնականաբար աղբյուրագիտական անգերազնահատելի նշանակություն ունեցան մեր ուսումնասիրության համար: Չնայած պարբերական մամուլի միջոցով իրագործվող՝ համալիր տեղեկատվությանը, ԳԱԱ-ին և Գերմանիայի ներքաղաքական իրադրությանը վերաբերող՝ մի շարք կարևոր

մանրամասների ամբողջացման հարցում մեզ մեծ ծառայություն մատուցեցին Յալլեի համալսարանի՝ Յոհ. Լեփսիուսի արխիվում պահպանվող նյութերը: Սկզբնաղբյուրների մյուս նշանակալից խումբը ներառում է ընկերության դրսի աշխատակիցների և այլ ժամանակակիցների, մասնավորապես Յ. Կյունցլերի, Բ. Էքարտի, Ի. Մարիա Զիկի, Ա. Մ. Ֆրիդեմանի և այլոց՝ առանձին հրապարակումներում ամփոփված հուշերն ու վկայությունները, որոնք մեզ օգնեցին մեր թեմայի հետ կապված մի շարք խնդիրների լուսաբանման հարցում: Այդ առումով գնահատալից հիշատակման է արժանի նաև Ա. Սահակյանի՝ 1955 թ. Բեյրութում հրատարակված «Դիւցազնական Ուրֆան եւ իր հայորդիները» աշխատությունը, որտեղ ամփոփված են ուռնայեցի հայ ժամանակակիցների արժեքավոր վկայությունները Ուռնայում կատարված իրադարձությունների և ԳԱԱ-ի՝ Ուռնայի մասնաճյուղի ու նրա աշխատակիցների մասին:

Մեր ուսումնասիրության համար մեծ կարևորություն ունեն Յոհ. Լեփսիուսի երկարամյա վաստակաշատ աշխատակցի՝ Ռ. Շեֆերի՝ 1932 թ. Պոտսդամում հրատարակված «Geschichte der Deutschen Orient-Mission» գիրքը, որտեղ հեղինակը արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Լեփսիուսի, ԳԱԱ-ի և նրանց կողմից իրականացված աշխատանքների վերաբերյալ: Այդ աշխատությունն առանձնաճանաչում է նաև Լեփսիուսի և նրա գործընկերների փոխհարաբերությունների ու ընկերության ներքին խոհանոցում տեղի ունեցած զարգացումների՝ հանգամանակից, տեղ-տեղ մինչև իսկ խիստ մանրամասն պարզաբանումներով, որոնք, բնականաբար, ընկերության զանգվածային տեղեկատվության մեջ մուտք չէին գործում, և որոնց հաճախ բավարար չափով իրազեկ չէին դառնում նաև դրսի աշխատակիցները: Այն հանգամանքը, որ ինչպես Շեֆերն, այնպես էլ վերոնշյալ մյուս հեղինակներն իրենց շարադրանքի ընթացքում հիմնականում առաջնորդվել են սեփական փորձառության և ընկալումների թելադրանքով, մեզ հնարավորություն է ընձեռել առանձին իրողությունների ամբողջական լուսաբանման համար կատարել նաև տարբեր սկզբնաղբյուրների տեղեկությունների արդյունավետ համեմատական քննություն: Թեմայի ամբողջական լուսաբանման հարցում որոշակիորեն կարևորվեց Յայաստանի օգնության գերմանական միության՝ Ֆրանկֆուրտի կոմիտեի պարբերական մամուլի, մասնավորապես «Sonnenaufgang» պարբերաթերթի ուսումնասիրությունը, որի հետ Լեփսիուսը և ԳԱԱ-ն, հատկապես սկզբնական շրջանում, համագործակցում էին: Նրանց գործունեությանն առնչվող՝ որոշ մանրամասների, ինչպես և հասարակական շրջաններում Յայակական հարցին վերաբերող զաղափարական ներհակությունների պարզաբանման առումով զգալի

կարևորություն ունեցան նաև մի շարք այլ եկեղեցական և միսիոներական կազմակերպությունների պարբերականներում պահպանված փաստագրական նյութերը: Մասնավորապես «Das notwendige Liebeswerk» կազմակերպության համանուն պարբերականի ուսումնասիրությունը մեծ դեր խաղաց Լեփսիուսի ընկերությանն անդամակցող կամ նրա հետ սերտ համագործակցության մեջ գտնվող մի շարք երախտավոր այրերի, գործիմասկ Պ. Ռոհրբախի, Է. Շֆիրի, Մ. Ռադեի և այլոց հայանպաստ ձեռնարկումների մյուս՝ ԳԱԱ-ի հետ անմիջականորեն չառնչվող ոլորտներին իրազեկվելու առումով: Սկզբնաղբյուրների մեկ այլ՝ մեր ուսումնասիրության համար էապես կարևորվող խումբը ներառում է Յայակական հարցի զարգացումներին, Յայոց ցեղասպանությանը և թուրք-գերմանական փոխառնչություններին վերաբերող տարբեր ժամանակահատվածներում լույս ընծայված փաստաթղթերի և փաստագրական նյութերի ժողովածուները: Այդ շարքում, բնականաբար, մեր ուսումնասիրության համար առանձնակի կարևորություն ունենին դր. Յոհ. Լեփսիուսի կողմից հրատարակված՝ փաստաթղթերի և փաստագրական նյութերի ժողովածուները,<sup>2</sup> ինչպես և ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վարդգես Միքայելյանի կողմից Յայակական հարցի և ցեղասպանության վերաբերյալ կայսերական Գերմանիայի ԱԳ նախարարության քաղաքական արխիվում պահպանված փաստաթղթերի ժողովածուն, որն իր փաստավավերագրական համակողմանի նշանակությունից գատ հնարավորություն է ընձեռում նորովի և առավել ստույգ արժևորել նաև Լեփսիուսի համապատասխան հրապարակումը:<sup>3</sup> Բացի այդ, մեր ուսումնասիրության համար մեծ կարևորություն ունեցավ Լեփսիուսի լույս ընծայած դիվանագիտական արձանագրությունների՝ գերմանացի հրապարակախոս Վ. Գուստի կողմից վերանայված ժողովածուն, որտեղ ներկայացված են նաև այդ արձանագրությունների՝ Լեփսիուսի հրապարակման մեջ չընդգրկված հատվածները:<sup>4</sup> Լեփսիուսի կողմից հրապարակված մյուս ժողովածուն,

<sup>2</sup> St'u Lepsius J., Armenien und Europa. Eine Anklageschrift wider die christlichen Großmächte und ein Aufruf an das christliche Deutschland, Berlin, 1896; Նույնի, Deutschland und Armenien 1914-1918. Sammlung diplomatischer Aktenstücke, Potsdam, 1919; Նույնի, Der Todesgang des Armenischen Volkes, Potsdam, 1919:

<sup>3</sup> St'u Микаелян В., Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919). Материалы политического архива Министерства иностранных дел кайзеровской Германии. Ереван, 1995.

<sup>4</sup> St'u ինտերն. ցանցում՝ Gust W.: Revidierte Ausgabe der von Johannes Lepsius 1919 unter dem Titel "Deutschland und Armenien" herausgegebenen Sammlung diplomatischer Aktenstücke, <http://home.t-online.de/home/wolfgang.gust/dvita.htm>:

որ կրում է «Der grüne Tisch» խորագիրը<sup>5</sup> ունենալով թեմատիկ այլ ընդգրկում և բովանդակելով նրա և նրա գործընկերների միջև առանձին ժամանակահատվածներում փոխանակված թղթակցություններն ու նամակագրական նյութերը, մեզ համար դարձավ կարևոր աղբյուր ԳԱԱ-ի ներխոհանոցային որոշ ուշագրավ զարգացումների, մասնավորապես 1907-1908 թվականներին ԳԱԱ-ում առաջացած գաղափարական հակասությունների, ինչպես և 1917 թվականին Լեփսիուսի և իր ընկերության հոգաբարձության տարածայնությունների ու պառակտման ենթատեքստը պարզաբանելու համար:

Սկզբնաղբյուրների հաջորդ բավականին ստվար հատվածը վերաբերում է մեր ուսումնասիրությանն ուղղակիորեն առնչվող կամ հարակից խնդիրների պարզաբանմանը նվիրված՝ արդեն կատարված հետազոտություններին, որոնք ներկայացված են ատենախոսության՝ օգտագործված գրականության ցանկում: Հայերի մյուս՝ շվեյցարացի, դանիացի, ամերիկացի և այլ երկրների բարեկամների գործունեությանը, Լեփսիուսի ընկերության հետ նրանց համագործակցությանը, հայոց պատմությանը, Հայկական հարցին, ցեղասպանությանը, Թուրքիայի և Մերձավոր Արևելքի այլ երկրների ներքաղաքական իրադարձություններին և հարակից խնդիրների լուսաբանմանը նվիրված այդ աշխատությունները մեր ուսումնասիրության ամբողջացման հարցում բնականաբար ունեցան կարևոր նշանակություն:

#### **ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ**

#### **ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ:**

Ատենախոսությունը քննարկվել և պաշտպանության է երաշխավորվել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի հայոց պատմության ամբիոնի նիստում: Ատենախոսության հիմնադրույթներն ու եզրակացությունները հրատարակվել են հեղինակի երկու մենագրություններում և հողվածներում: Ատենախոսության նյութերը զեկուցվել են մի շարք գիտական կոնֆերանսներում:

#### **ԱՏԵՆԱՒՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ:**

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, վերջաբանից և օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից: Ընդհանուր ծավալը կազմում է 366 էջ:

#### **Ներածության**

մեջ հիմնավորված է հիմնահարցի արդիականությունը և հրատապությունը, գիտական նորույթն ու գործնական նշանակությունը, նշված են հետազոտության նպատակները, տրված է խնդրո առարկա հարցի ուսումնասիրվածության աստիճանը:

<sup>5</sup> St'u Der grüne Tisch, Sammlung von Aktenstücken über die Gründe meines Austritts aus der Deutschen Orient-Mission, Herausgegeben von Dr. Johannes Lepsius, Potsdam, 1920.

Առաջին գլուխը՝ «Ընկերության կազմակերպական և աշխատանքային տարեգրությունը մինչև առաջին աշխարհամարտը (1895-1914 թթ.)», բաղկացած է չորս ենթագլուխներից: Դրանցից առաջինը նվիրված է ընկերության հիմնադրման և օգնության աշխատանքների սկզբնավորման լուսաբանմանը: Ընկերությունը հիմնադրվեց 1895 թ. սեպտեմբերի 29-ին Ֆրիզդորֆում, որտեղ ավետարանական քահանա Յոհ. Լեփսիուսը 1887 թ. հունվարից ստանձնել էր ծխական համայնքի քահանայությունը:<sup>6</sup> Սկզբնական նպատակը Արևելքի մահմեդական շրջաններում քարոզչական գործունեության ծավալումն էր: Երբ, սակայն, 1895 թ. աշմանը ծայր առան արևմտահայության զանգվածային կոտորածները, ընկերության սկզբնական ծրագիրն այդ իրադարձությունների թելադրանքով մղվեց երկրորդ պլան, և առաջնահերթ խնդիրը դարձավ հալածանքների ենթարկվող հայ ժողովրդին օգնության կազմակերպումը:<sup>7</sup> Իրադրությունն ընկերությունից պահանջում էր ժամ առաջ ձեռնամուխ լինել օգնության կազմակերպմանը. մի առաջադրանք, որի իրականացման համար, սակայն, Գերմանիայում դեռ բավարար նախադրյալներ չկային: Թուրքական քարոզչամիջոցները փորձում էին խոչընդոտել իրադարձությունների հրապարակայնացումը՝ կատարվածը ներկայացնելով որպես հայ հեղափոխականների «ծրագրված ապստամբության» կանխման միջոցառում:<sup>8</sup> Գերմանական զանգվածային լրատվությանը նույնպես հիմնականում բավարարվում էր թուրքական լրատվության արտատպմամբ: Այդ քարոզչությանը հակազդելու և սեփական հետազոտությամբ սրբագրված տեղեկություններ ձեռք բերելու նպատակով Լեփսիուսը 1896 թ. մայիսին Ջ. Գրինֆիլդի հետ մեկնեց Թուրքիա, որտեղ իրադարձությունների մասին ձեռք բերելով ստույգ և մանրամասն տեղեկատվություն՝ կարողացավ (Թալասում և Ուռհայում) նաև իր խնամառության տակ վերցնել նաև առաջին 100 հայ որբերին:<sup>9</sup> Օգնության գործն արդյունավետ վարելու համար նախ հարկավոր էր այն դնել կազմակերպական հիմքերի վրա: Ուստի Լեփսիուսը Թուրքիայից վերադառնալուց հետո պաստոր է. Լոհմանին առաջարկեց մի շարք բարեկամների հրավիրել Ֆրանկֆուրտ և ստանձնել հիմնվելիք՝ Հայաստանի օգնության գերմանական միության նախագահությունը:<sup>10</sup> Միությունը, որի հիմնադիր նիստը տեղի ունեցավ

<sup>6</sup> Schäfer R., Geschichte der Deutschen Orient-Mission, Potsdam, 1932, էջ 3:

<sup>7</sup> Lepsius J., 30 Jahre Deutscher Orient-Mission, „Der Orient“, 1925, էջ 111:

<sup>8</sup> Lepsius J., 30 Jahre Deutscher Orient-Mission, „Der Orient“, 1925, էջ 130:

<sup>9</sup> Schäfer R., Geschichte..., էջ 5:

<sup>10</sup> Lepsius J., Der Herausgeber an die Freunde unsrer Arbeit, „Der Christliche Orient“, 1900, էջ 5:

1896 թ. հուլիսի 2-ին Ս. Ֆրանկֆուրտում, կազմավորվեց երկու՝ Ֆրանկֆուրտի և Բեռլինի կոմիտեների հենքի վրա:<sup>11</sup> Ֆրանկֆուրտի կոմիտեի նախագահ ընտրվեց Է. Լոհմանը, իսկ կենտրոնական Բեռլինի կոմիտեի նախագահ՝ Ա. Ֆոն Բեռնշտորֆը: Լեփսիուսն իր ցանկության համաձայն դարձավ Բեռլինի կոմիտեի քարտուղարը՝ այդ պաշտոնում հետագայում համայնքներում և եկեղեցական ժողովներում օգնության աշխատանքների հետ կապված խնդիրները ներկայացնելու նպատակով:<sup>12</sup> Այդ ժողովում, մինչև հետագա քայլերի ձեռնարկումը, վճռվեց հրատարակել Լեփսիուսի տեղեկագիրը և սպասել արձագանքներին: Հողվածը՝ «Ճշմարտությունը Հայաստանի վերաբերյալ» վերնագրով, լույս տեսավ 1896 թ. օգոստոսին Բեռլինի «Der Reichsbote» օրաթերում:<sup>13</sup> Նա այդ պարբերականում օգոստոսի 12-ից 27-ը ընկած ժամանակամիջոցում հրատարակեց բազմաթիվ այլ հոդվածներ ևս, որոնք օգոստոսի վերջին վերոնշյալ հոդվածի հետ միասին լույս տեսան նաև առանձին գրքով՝ «Հայաստանը և Եվրոպան. մեղադրագիր քրիստոնյա մեծ տերություններին և կոչ քրիստոնյա զերմանիային» վերնագրով:<sup>14</sup> Այդպիսով զերմանացի քրիստոնյաների մի զգալի հատված իրազեկ դարձավ Հայաստանում կատարված իրողություններին, և եկեղեցական շրջաններում ծայր առան հուզումներ:<sup>15</sup> Գիրքը, որ շուտով հայտնվեց բազմաթիվ գրախանութներում, հետագայում ունեցավ վեց նոր հրատարակություն, թարգմանվեց անգլերեն ու ֆրանսերեն և մեծ դեր խաղաց նաև առհասարակ եվրոպական հասարակայնությանն իրազեկելու գործում, ավելի ընդգրկուն էր ներկայացնում համիդյան կոտորածների ընդհանուր պատկերը: Փաստական և թվական տվյալների կողքին այնտեղ ներկայացված էին նաև ականատեսների վկայություններ՝ սոսկալի մանրամասներով: Օգնության կազմակերպման առաջին նախադրյալներն այդպիսով արդեն առկա էին, և ՀՕԳՄ-ի՝ 1896 թ. օգոստոսի 28-ին Ֆրանկֆուրտում կայացած նիստում վճռվեց բոլոր հնարավոր միջոցներով սկսել լայնածավալ ագիտացիա և

<sup>11</sup> Schäfer R., Geschichte..., էջ 9:

<sup>12</sup> Schäfer R., Geschichte..., էջ 9: 1900 թ-ի մայիսի 11-ին ՀՕԳՄ-ի Բեռլինի կոմիտեի վարչության նիստում վճռվեց կազմակերպությունը վերանվանել «Գերմանական առաքելություն արևելքում», իսկ նախկին՝ «Հայաստանի օգնություն» անվանումը դարձնել ենթանուն: Sten Lepsius J., Deutsche Orient-Mission, „Der Christliche Orient“, 1900, էջ 81: Ընկերությունն այդպիսով վերականգնեց իր նախնական անվանումը և փաստացիորեն բաժանվելով ՀՕԳՄ-ից՝ դարձավ միանգամայն անկախ:

<sup>13</sup> Անդ:

<sup>14</sup> Sten Lepsius J., Armenien und Europa. Eine Anklageschrift wider die christlichen Großmächte und ein Aufruf an das christliche Deutschland., Berlin, 1896.

<sup>15</sup> Schäfer R., Geschichte... էջ 9:

հանգանակությունների կազմակերպում: Ըստ այդմ, սեպտեմբերից սկսեցին կազմակերպվել բազմաթիվ հասարակական հավաքույթներ, որտեղ կոչ էր արվում օգնություն ցուցաբերել հայերին: Ի նպաստ հայ ժողովրդի ակտիվ դիրքորոշում հանդես բերելու կոչեր էին հղվում նույնիսկ կայսերը:<sup>16</sup> Կատարվում էին հանգանակություններ, որոնք որպես կանոն ստանում էին սինդոների և եկեղեցական մյուս իրավասու մարմինների թույլտվությունը:<sup>17</sup> Ինչ վերաբերում էր պետական կառույցներին, ապա վերջիններս չափազանց զգայուն էին դարձել հասարակական տրամադրությունների՝ այդ նոր զարգացումների հանդեպ: Հավաքույթները մշտապես վերահսկվում էին գաղտնի ոստիկանության և ՆԳ նախարարության աշխատակիցների կողմից և նվազագույն իսկ պատրվակի դեպքում արգելվում:<sup>18</sup> Հաճախ իշխանությունների կողմից տարբեր պատճառաբանություններով արգելվում էին նաև հանգանակությունները:<sup>19</sup> Կազմակերպվում էին մինչև անգամ այլընտրանքային հավաքույթներ, որտեղ մտավորականությանը կոչ էր արվում զերծ մնալ հայանպաստ միջոցառումներին մասնակցելուց:<sup>20</sup> Լեփսիուսն իր հայանպաստ աշխատանքների ընթացքում պետք է հակասությունների մեջ մտներ ոչ միայն պետական, այլև եկեղեցական իշխանությունների հետ: Դրա առաջին փաստն առարկայացավ 1896 թ. աշնանը, երբ Մագդեբուրգի վերադաս եկեղեցական իշխանությունը, իսկ այնուհետև նաև Բեռլինի Ավագագույն եկեղեցական խորհուրդը մերժեցին նրա խնդրանքը՝ զեկուցումների համար շրջագայություններ կատարելու նպատակով իրեն վեցամսյա արձակուրդ հատկացնելու վերաբերյալ: Նա այլ հետևություն չկատարեց դրանից, քան հրաժարվել քահանայական ծառայությունից, բնականաբար նաև աշխատավարձից, և իր գործունեությամբ անարգել զբաղվելու համար հոկտեմբերին տեղափոխվեց Բեռլին:<sup>21</sup>

Ատենախոսությունում հանգամանալից լուսաբանվում են օգնության աշխատանքների արդյունավետ կազմակերպման նպատակով Լեփսիուսի և նրա գործընկերների կողմից իրականացված մեծածավալ կազմակերպական նախաձեռնություններն ու համալիր տեղեկատվական գործունեությունը, որի շնորհիվ նրանք կարողացան ապահովել նաև հասարակական լայն շրջանների աջակցությունն այդ

<sup>16</sup> Feigel U., Das evangelische..., էջ 76:

<sup>17</sup> Schäfer R., Geschichte..., էջ 17-18:

<sup>18</sup> Lohmann E., Nur ein Leben, Schwerin, 1933, էջ 30:

<sup>19</sup> „Die Christliche Welt“, 1896, էջ 958-959:

<sup>20</sup> Goltz H., Zwischen..., էջ 869:

<sup>21</sup> Lepsius J., In eigener Sache, „Mitteilungen aus der Arbeit von Dr. Johannes Lepsius“, 1918, էջ 82:

աշխատանքներին: Հատկանշական է, որ Լեփսիուսի ընկերությունն, ի տարբերություն բարեգործական աշխատանքներ վարող այլ կազմակերպությունների, հայկական շրջաններում մշտապես մեծ սեր և համարում էր վայելում, չնայած այն բանին, որ որոշ կազմակերպություններ ոչ պակաս ներդրումներ և համապատասխանաբար նաև բարեգործական աշխատանքներ են իրականացրել: Սյուս կազմակերպությունները, որպես կանոն, մարդասիրական աշխատանքներին զուգահեռ ձգտում էին հայ հոգևոր-մշակութային կյանքում ձեռք բերել որոշակի ազդեցության ուղորտներ, մասնավորապես թե որբանոցներում և թե բնակչության շրջանում վարում էին նաև ակտիվ քարոզչություն, ինչն առաքելական եկեղեցու և համայնքների կողմից սուր դիմադրության պատճառ էր դառնում: Մինչդեռ Լեփսիուսն ու ԳԱԱ-ն, ինչպես դիպուկ կերպով նշում էր Ռ. Շեֆերը, իրենց ելակետը համարում էին ոչ թե ավետարանի քարոզումը, այլ «ավետարանի պահանջների իրագործումը»: <sup>22</sup> Հասու լինելով քարոզչության արատավոր հետևանքներին և միանշանակորեն մերժելով այն՝ Լեփսիուսը հանդես էր գալիս «փոխադարձ սիրո և վստահության պայմաններում» հայ և մյուս հին քրիստոնյա եկեղեցիների ամրապնդման ու հզորացման պահանջով <sup>23</sup> իր տեսակետները հիմնավորելով բազմաթիվ հրապարակումներում, որոնք ատենախոսությունում մանրագնին քննության են ենթարկվում: ԳԱԱ-ն մշտապես հավատարիմ մնաց իր առաջնորդի սկզբունքներին: Այն հայության մեջ երբեք քարոզչական գործունեություն չժամակայեց, այլ իր բոլոր հնարավորությունները ի սպաս դրեց հայ ժողովրդին և եկեղեցուն գորավիզ լինելուն:

Երկրորդ ենթագույնը նվիրված է մասնաճյուղերում կատարված աշխատանքների լուսաբանմանը: Ուռհայի որբանոցում շարունակվեց երեխաների հավաքագրումը, որոնք թիվը 1896 թ. վերջին հատեց 200-ի սահմանագիծը: <sup>24</sup> Բացի այդ որբանոցներ ստեղծվեցին Դիարբեքիում, Պարսկաստանում (Խոյ) և Բուլղարիայում (Վառնա), որտեղ անմխիթար վիճակում հանգրվանել էին տասնյակ հազարավոր հայ փախստականներ: Դրանց կից հիմնվեցին նաև արտադրական ու արհեստագործական ձեռնարկություններ, որոնք տեղի ունեզուրկ բնակչությանն աշխատատեղեր տրամադրելուց, հաստատությունների կարիքները բավարարելուց և լրացուցիչ շահույթներ ապահովելուց զատ ծառայում էին կրթօջախներ որբերին ինքնուրույն կյանքի նախապատրաստելու համար: Ստեղծվեցին նաև հիվանդանոցներ,

կլինիկաներ ու դեղատներ՝ հատկացվելով որբանոցների և բնակչության կարիքներին: Այդ համապարփակ աշխատանքների իրականացման համար հավաքագրվեցին բազում նվիրյալներ, որոնք մեկնելով «առաջին ճակատ» տևականորեն, իսկ շատերը նույնիսկ ցմահ նվիրվեցին հայ ժողովրդի վերբերի անոթմանն ու նրա որբ, անօգնական զավակների փրկության գործին: Ուռհայի որբանոցի և արտադրական ձեռնարկությունների ղեկավարումը 1897 թ. սկզբից իրականացնում էր Ֆ. Էքարտը, երեխաների դաստիարակության գործը՝ Կ. Յեպեն, բուժսպասարկման աշխատանքները՝ հաջորդաբար Յ. Յյուրխերը, Գ. Խրիստը և Ա. Ֆիշերը, <sup>25</sup> որոնց մշտապես իր անփոխարինելի օգնությունն էր ցուցաբերում Յ. Կյունցլերը: <sup>26</sup> Խոյում մասնաճյուղի աշխատանքները հաջորդաբար ղեկավարում էին Ս. Բաղդասարյանը, պաստոր Յ. Արքշատը, Ս. Հենզելմանը, Դ. Ֆոն Օյրցենը և Ա. Հառնակը, <sup>27</sup> Դիարբեքիում պաստոր Բեհնիշը և պաստոր Ֆոն Բերգմանը, <sup>28</sup> Վառնայում գործում էր Ա. Ամիրխանյանը: <sup>29</sup> Համալիր աշխատագործընթացներն իհարկե միայն նրանց ուժերով իրագործվել չէին կարող, ուստի նրանց օգնելու համար ԳԱԱ-ի հանձնարարությամբ տարբեր ժամանակահատվածներով մասնաճյուղեր էին մեկնում գերմանացի և այլերկրացի բազմաթիվ այլ աշխատակիցներ ևս: Հավաքագրվել էր նաև տեղացի հայերի մի հոծ բազմություն՝ իր անուրանալի ներդրումը բերելով մասնաճյուղերի աշխատանքներում, որոնք ատենախոսությունում ամբողջականորեն լուսաբանվում են: Այստեղ միայն նշենք, որ հիշյալ տեղանուններն ամբողջականորեն չեն արտացոլում ընկերության գործունեության աշխարհագրական ընդգրկումը, որ անհամեմատ ավելի մեծ էր: Միայն այն փաստը, որ Ուռհայի որբանոցի բուժաստատությունների հռչակը տարածված էր ողջ երկրով մեկ, և որ նույնիսկ ամենահեռավոր վայրերից, շաբաթներ և ամիսներ ճանապարհ կտրելով՝ բազմաթիվ հիվանդներ այնտեղ էին մեկնում բուժվելու համար, կարող է ասվածի պերճախոս վկայությունը լինել: <sup>30</sup> Նույնը վերաբերում էր նաև ԳԱԱ-ի որբանոցների արտադրական և կրթական կառույցներին, որոնց գործունեության նոր մեթոդները

<sup>25</sup> St'u Jahresbericht der Missionsklinik in Urfa 1903, „Der Christliche Orient“, 1904, էջ 69:

<sup>26</sup> Missionsklinik und Spital in Urfa 1897-1907, „Der Christliche Orient“, 1908, էջ 29:

<sup>27</sup> St'u Unsere Arbeit in Persien, „Der Christliche Orient“, 1900, էջ 19:

<sup>28</sup> St'u Künzler J., Dreißig Jahre Dienst im Orient, Basel 1933, էջ 14: Հմմտ. Schäfer R., Geschichte..., էջ 22:

<sup>29</sup> St'u A. Amiranjanjan, „Der Christliche Orient“, 1900, էջ 100-102: Հմմտ. Schäfer R., Geschichte..., էջ 15:

<sup>30</sup> St'u Lepsius J., Briefe aus der Türkei, „Der Christliche Orient“, 1913, էջ 204:

<sup>22</sup> Schäfer R., Geschichte..., էջ 27:

<sup>23</sup> Անդ, էջ 7:

<sup>24</sup> Berichte über das deutsche Hilfswerk in Armenien, „Der Christliche Orient“, 1897, էջ 271:



կարճ ժամանակում մեծ տարածում էին գտնում:<sup>31</sup> Բուժսպասարկման, արհեստագործության և կրթության բնագավառներում ընդօրինակելի նորարարություն էին հանդես բերում նաև ԳԱԱ-ի մյուս մասնաճյուղերը: Ատենախոսությունում մանրամասն լուսաբանվում են մասնաճյուղերի ինչպես որբախնամ, այնպես էլ արտադրական, բուժսպասարկման, կրթական և մյուս աշխատանքների ընթացքն ու ձեռքբերումները:

Ինչևէ, 1897-1913 թթ. ընկերությունը կարողացավ հայթայթել և իրացնել մոտ 3, 5 միլիոն մարկ գումար: Եթե նկատի առնենք, որ յուրաքանչյուր որբ երեխայի տարեկան խնամքի համար ծախսվում էր 100, իսկ ամենաթանկ տարիներին՝ 160-180 մարկ,<sup>32</sup> ապա պարզ կդառնա, թե որքան մեծ էր ներդրված կապիտալը, որի միջոցով հատկացված օթևանի, խնամքի և աշխատատեղերի շնորհիվ համիդյան կոտորածները վերապարծ հազարավոր որբեր և անօգնական այրիներ փրկվեցին մոլեգնող սովի և համաճարակների պայմաններում այլապես անխուսափելի թվացող մահից:

Երրորդ ենթագլխում մանրամասն լուսաբանվում է ԳԱԱ-ի կազմակերպական և հրապարակախոսական գործունեությունը Գերմանիայում: Ներկայացվում են մի շարք աստվածաբանական խնդիրների շուրջ Զանրակցական շարժման հետ Լեփսիուսի ունեցած բանավեճերը, որոնց պատճառով շարժման կողմից ընկերությանը ցուցաբերվող նյութական աջակցությունը զգալիորեն նվազեց՝ ԳԱԱ-ի համար ստեղծելով բավականին ծանր կացություն: Դրա խորացմանը նպաստեցին նաև 1899-1901 թթ. Թուրքիայում և Պարսկաստանում տեղի ունեցած տևական երաշտներն ու համապատասխանաբար կատարվող թանկացումները, որոնց արդյունքում առաջին անհրաժեշտության մթերքների գներն այնտեղ գրեթե եռապատկվեցին, և բարձրացան նաև երեխաների տարեկան խնամքի ծախսերը՝ յուրաքանչյուրի համար նախկին 100 մարկի փոխարեն կազմելով 150-180 մարկ:<sup>33</sup> Քանի որ ԳԱԱ-ի գործունեության երկրորդ տարում նրա տրամադրության տակ դեռ բավականաչափ միջոցներ կային, լրացուցիչ ներդրումների հաշվին հաջողվեց այդ անցումը հաղթահարել,<sup>34</sup> ինչը, սակայն, 1900 թ-ին դարձավ խիստ խնդրական: Միակ ելքը նոր նյութական աղբյուրների հայթայթումն էր կամ, այլ կերպ ասած, բարեկամների թվի ընդլայնումը, որ կարող էր իրագործվել բացառապես արդյունավետ քարոզչական գործունեության միջոցով: Կատարված աշխատանքների վերաբերյալ լրատվությունն ընդլայնելու

<sup>31</sup> Տե՛ս „Der Christliche Orient“, 1910, էջ 34:

<sup>32</sup> Տե՛ս Henselmann M., An die Pflegeeltern unserer Kinder, „Der Christliche Orient“, 1900, էջ 59:

<sup>33</sup> Lepsius J., An die Pflegeeltern unserer Kinder, „Der Christliche Orient“, 1900, էջ 59:

<sup>34</sup> Անդ:

նպատակով Լեփսիուսը հիմնեց երկու նոր պարբերականներ ևս: Զանայնքներում կազմակերպվող հավաքույթներին տեղեկատվական աջակցություն ցուցաբերելու համար ընկերության կողմից պարբերաբար հրատարակվում էին թուղիկներ և անվճար առաքվում բոլոր ցանկացողներին:<sup>35</sup> Բացի այդ, համայնքների ցանկության դեպքում ԳԱԱ-ն նրանց տրամադրում էր զեկուցողներ, որոնք ունկնդիրներին ներկայացնում էին Արևելքի իրականությունը, աշխատանքների ընթացքը, հիմնախնդիրները և այլն:<sup>36</sup> Նվիրատվությունների նվազագույն չափերը կանոնարկելու և միաժամանակ բարեկամների շրջանն ընդլայնելու նպատակով ԳԱԱ-ն 1903 թ. սկզբից հանդես եկավ նաև անդամակցության առաջարկով, ըստ որի տարվա ընթացքում նվազագույնը 10 մարկ առաքող բարեկամները կարող էին սեփական ցանկությամբ դառնալ ընկերության անդամներ:<sup>37</sup> Այդ միջոցառումների շնորհիվ հաջողվեց որոշակիորեն կրճատել գոյացած ճեղքվածքը, որը 1906 թ. վերջնականապես փակվեց:<sup>38</sup> Չնայած հետագա տարիներին այլևս մեծ պակասորդներ չէին գոյանում, և զուգահեռաբար հաջողվում էր նաև մարել նաև կազմակերպության պարտքերը, այնուամենայնիվ ԳԱԱ-ի ֆինանսատնտեսական դրությունը ընդհուպ մինչև 1914 թ. չարունակում էր մնալ լարված:<sup>39</sup> Այդ պայմանավորված էր նաև տասնամյակի վերջին Լեփսիուսի և ԳԱԱ-ի տնօրեն պաստոր Քլայնի միջև ի հայտ եկած տարակարծություններով, որը ձգտում էր զանազան շահարկումների և խարդախումների միջոցով ընդլայնել իր ազդեցության ոլորտները: Չնայած այդ հակասությունները, որոնք ատենախոսության մեջ ըստ ամենայնի բնության են ենթարկվում, ի վերջո ստացան իրենց արդարացի հանգուցալուծումը, բայց և ունեցան անբարենպաստ ազդեցություն ԳԱԱ-ի տնտեսական դրության համար: Այդ հանգամանքը, սակայն, չկարողացավ խոչընդոտել օգնության աշխատանքների զարգացման գործընթացը:

Չորրորդ ենթագլխում պարզաբանվում են 20-րդ դարի երկրորդ տասնամյակի սկզբին դարձյալ մեծ պետությունների քաղաքական օրակարգում հայտնված հայկական բարեփոխումների իրականացման նպատակով Լեփսիուսի և նրա գործընկերների կողմից իրագործվող հրապարակախոսական և կազմակերպական նախաձեռնությունները՝ ուղեկցվելով այդ հարցում Գերմանիայի որդեգրած պաշտոնական դիրքորոշման հանգամանակից լուսաբանմամբ: 20-րդ դարի երկրորդ

<sup>35</sup> Տե՛ս „Der Christliche Orient“, 1909, էջ 64:

<sup>36</sup> Տե՛ս Verschiedenes, „Der Christliche Orient“, 1903, էջ 192:

<sup>37</sup> Տե՛ս „Der Christliche Orient“, 1903, գլխաշապիկը:

<sup>38</sup> Անդ:

<sup>39</sup> Տե՛ս Kleine Mitteilungen, անդ, էջ 15:

տասնամյակի սկզբում Թուրքիայի համար ստեղծվել էր խիստ ծանր իրադրություն. Իտալիայի և Բալկանյան երկրների դեմ պատերազմում Թուրքիայի կրած պարտությունները, Ալբանիայում ու արաբական երկրներում ծայր առած անջատողական շարժումները և վերջապես վերստին մեծ պետությունների քաղաքական օրակարգում հայտնված Յայկական հարցը սպառնում էին այդ երկիրը հասցնել լիակատար կազմալուծման, ուստի պատահական չէ, որ Գերմանիայի արտաքին քաղաքականությունը առաջնորդվում էր մի կողմից իր հին դաշնակցի հետ բարիդրացիական հարաբերությունները շարունակելու, իսկ մյուս կողմից՝ նրա հնարավոր փլուզման դեպքում տարածաշրջանում սեփական տնտեսաքաղաքական և մշակութային ազդեցությունը պահպանելու ձգտումով: Բնականաբար այդ դեպքում նրան անհրաժեշտ կլինեին մեկ ուրիշ դաշնակից, իսկ ավելի լավ, քան հայ ժողովուրդը, այդ դերը ոչ ոք չէր կարող կատարել:<sup>40</sup> Յետևապես պատահական չէ, որ Գերմանիայում հայերի վերաբերյալ ավանդաբար իշխող տեսակետները 1913 թ. ենթարկվում էին արմատական վերափոխման: Գերմանիայի պետական լրատվամիջոցները և պաշտոնական մամուլը կարծ ժամանակում հեղեղվեցին հայ ժողովրդի մասին գովեստներով և գնահատանքներով, և, որ չափազանց ուշագրավ է, այդ գովեստներում չէին թերանում նույնիսկ ավանդաբար թուրքամետ կողմնորոշում ցուցաբերած գործիչները: Այդ ինքնաբերական չէր և բնականաբար իր դրդումները ստանում էր կառավարության կողմից: Դեռ 1913 թ. հունվարին Գերմանիայի ԱԳՆ-ի պետքարտուղարի տեղակալ Ցիմերմանը Կ. Պոլսի դեսպան Վանգենհայմին հրահանգում էր, որ գերմանական կառավարությունը հայկական բարեփոխումների վերաբերյալ կայանալիք բանակցությունների ընթացքում չպետք է չեզոք դիրքորոշում գրավեր, այլ, ելնելով Թուրքիայում իր տնտեսական շահերից, պետք է ակտիվորեն մասնակցեր դրանց: Վանգենհայմն իր հերթին հավաստելով, որ Թուրքիայի տրոհման դեպքում հայերին մեծ ապագա էր սպասվում առաջարկում էր, որ գերմանական մամուլը հայերի հանդեպ ավելի բարեկամական դիրքորոշում որդեգրեր, քան մինչ այդ կար:<sup>41</sup> Այսպիսով, պաշտոնական Գերմանիան արտահայտում էր նույն գաղափարները, որոնք նախկինում պրոպագանդվում էին հայ ժողովրդի բարեկամների կողմից: Վերջիններս այդ փաստն այնպիսի խանդավառությամբ ընդունեցին, որ, օրինակ, Մ. Ռադեն «Die Christliche Welt» պարբերականում առաջարկում էր հավաքել ստորագրություններ և ուղարկել Գերմանիայի կառավարությանը՝ կոչ անելով ըստ հնարավորին ակտիվ հանդես գալ հայերի օգտին:<sup>42</sup> Հայանպաստ

<sup>40</sup> Անդ, էջ 152:

<sup>41</sup> Die Große Politik der Europäischen Kabinette 1871-1914, Berlin 1927, h. 38, էջ 13:

<sup>42</sup> Feigel U., Das evangelische, էջ 153:

հրապարակումներով էին հանդես հանդես գալիս նաև հայ ժողովրդի մյուս բարեկամները: Մեծ և երախտաշատ հրապարակախոսական աշխատանք ծավալեց նաև Յոհ. Լեփսիուսը՝ տպագրելով հողվածների մի ամբողջ շարք, որտեղ լուսաբանվում էր հայկական հարցի առաջացման և զարգացման պատմությունը, կատարվում էին քաղաքական իրադրության վերլուծություններ և այլն:<sup>43</sup>

1913 թ. հունիսի սկզբին Լեփսիուսը ձեռնարկեց իր նոր ճանապարհորդությունը դեպի Թուրքիա: Օգոստոսի 1-ին, երբ նա Ուռհայից վերադարձավ Կ. Պոլիս, բանակցող հիմնական կողմերի՝ գերմանական և ռուսական պատվիրակությունների միջև այն աստիճան սուր հակասություն էր առաջացել, որ բարեփոխումների ծրագիրը կարող էր տապալվել, սակայն Լեփսիուսի հետևողական միջամտության շնորհիվ ի վերջո հաջողվեց հասնել փոխադարձ համաձայնության, և օգոստոսի 24-ին, երբ նա Կ. Պոլսից վերադարձավ, բանակցությունները հիմնականում ավարտվել էին:<sup>44</sup> 1914 թ. սկզբին Թուրքիան նույնպես ներկայացրեց իր համաձայնությունը բարեփոխումների փաթեթի վերաբերյալ, որը հունվարի 26-ին ստորագրվեց նաև Ռուսաստանի կողմից:<sup>45</sup> Նախատեսված էր Թուրքիայի հայկական շրջաններում պահել երկու գլխավոր տեսուչներ, որոնցից մեկը՝ հոլանդացի գեներալ Վեստենենկը պետք է հաստատվեր Էրզրումում, իսկ երկրորդը՝ նորվեգացի Մայոր Յոֆը, Բիթլիսում: Երկուսն էլ իրավասու էին վերահսկել տեղական իշխանությունների գործունեությունը և բարեփոխումների իրականացումը:<sup>46</sup> Բացի այդ նրանց պետք է ենթարկվեին տեղական զինված ուժերը, իսկ համիդեական միավորումները որպես այսպես կոչված «պահեստային ուժեր» պետք է ցրվեին:<sup>47</sup> Բարեփոխումների իրականացմամբ առաջանում էին նաև հայ ժողովրդի հետ համագործակցության և մշակութային կապերի զարգացման լայն հեռանկարներ, ուստի պատահական չէ, որ Լեփսիուսը և հայ ժողովրդի մյուս գերմանացի բարեկամները ձգտում էին գործուն քայլեր ձեռնարկել հայ-գերմանական փոխհարաբերությունների սերտացման և ամրապնդման ուղղությամբ: Ըստ այդմ, 1914 թ. հունիսի 12-ին ԳԱԱ-ի

<sup>43</sup> Sten Lespsius J., Die Ursachen des Zusammenbruchs, „Der Christliche Orient“, 1913, էջ 1-6; Lepsius J., Die armenischen Reformen, անդ, էջ 177-181, 214-219 և այլն:

<sup>44</sup> Lepsius J., Die armenischen Reformen, „Der Christliche Orient“, 1913, էջ 218:

<sup>45</sup> Մարուխանյան Ն., Հայկական հարցը մինչխորհրդային հայ հայ հասարակական քաղաքական մտքի և պատմագրության մեջ, Երևան, 1997, էջ 130:

<sup>46</sup> Sten Լեո, Հայոց հարցի վավերագրերը, Թիֆլիս, 1915, էջ 342-357:

<sup>47</sup> Sten Die Große Politik der Europäischen Kabinette 1871-1914, Berlin, 1927, h. 38, էջ 160-161:

հոգաբարձությունը որոշում ընդունեց Ուռհայում ստեղծել ուսուցիչների պատրաստման գերմանա-հայկական ուսումնական կենտրոն՝ նախատեսելով այդ նպատակի համար տարեկան հատկացնել 25000 մարկ,<sup>48</sup> իսկ ևս մի քանի օր անց Լեփսիուսի և մի շարք բարեկամների նախաձեռնությամբ Բեռլինում ստեղծվեց Գերմանա-հայկական ընկերությունը, որի հիմնադիր նիստը տեղի ունեցավ հունիսի 16-ին:<sup>49</sup> Հուլիսի 1-ին հրատարակվեց նաև ընկերության «Մեսրոպ» պարբերականի առաջին համարը, որտեղ ամփոփված էին Լեփսիուսի, Ռոհրբախի, Գրինֆիլդի հոդվածները և գրական, հրապարակախոսական այլ նյութեր:<sup>50</sup> Պատերազմը, սակայն, ի չիք դարձրեց այդ ծրագրերի իրականացումը: «Մեսրոպ» ամսագրի երկրորդ համարը, որ տպարանում գրեթե պատրաստ էր, լույս չընծայվեց: Բարեփոխումները նույնպես դեռ չիրագործված՝ մեծ տերությունների քաղաքական օրակարգից դարձյալ դուրս մղվեցին, և երկու տեսուչները, որոնք արդեն մեկնել էին Թուրքիա, այնտեղից ետ ուղարկվեցին:<sup>51</sup> Բարեփոխումների փոխարեն հայ ժողովրդին սպասվում էր անօրինակ ողբերգությունների և մաքառումների մի շրջան:

Երկրորդ գլուխը՝ «Աշխարհամարտի հորձանուտում (1914-1918 թթ.)», բաղկացած է երեք ենթագլուխներից, որոնցից առաջինում լուսաբանվում է պատերազմի բռնկումից հետո ԳԱԱ-ի մասնաճյուղերին վիճակված ճակատագիրը: 1914 թ. սեպտեմբերի 2-ին ռուսական հյուպատոսի հրամանոց Խոյի որբանոցը փակվեց, և Հռոմակը, երեխաներին տեղավորելով հայ ընտանիքներում, հարկադրված եղավ վերադառնալ Գերմանիա:<sup>52</sup> Տեղեկանալով այդ մասին՝ ԳԱԱ-ի վարչությունը բողոքներ հղեց Գերմանիայի ԱԳՆ-ին և Թեհրանի գերմանական դեսպանությանը՝ չեզոք երկրում գերմանական որբանոցների փակումը և կանանց ու երեխաների ներկալումն ու բռնի վտարումը դատապարտելով որպես միջազգային իրավունքի կոպիտ խախտումներ:<sup>53</sup> Դրանք, սակայն, որևէ արդյունք չէին կարող տալ, և Խոյի որբանոցը հատկացվեց կազակներին որպես զորանոց:<sup>54</sup> Ինչ վերաբերում է Ուռհայի մասնաճյուղին, ապա ատենախոսությունում նոր ուշագրավ մանրամասներով են լուսաբանվում այդ քաղաքում

<sup>48</sup> Schäfer R., Geschichte..., էջ 83:  
<sup>49</sup> Aufruf zur Begründung der „Deutsch-Armenischen Gesellschaft“, „Der Christliche Orient“, 1914, էջ 102:  
<sup>50</sup> Տե՛ս «Mesrop. Zeitschrift der Deutsch-Armenischen Gesellschaft», Berlin, 1914:  
<sup>51</sup> Künzler J., Im Lande des Blutes und der Tränen, Potsdam, 1921, էջ 2:  
<sup>52</sup> Harnack A., Unfreiwillige Heimkehr, „Der Christliche Orient“, 1915, էջ 19-20:  
<sup>53</sup> Տե՛ս Nachricht, անդ, էջ 174:  
<sup>54</sup> Տե՛ս Nachrichten von den Stationen, անդ, էջ 144-145:

կատարված դեպքերը, որոնց ընթացքում ԳԱԱ-ի Ուռհայի աշխատակիցների կողմից արվում էր հնարավորն ինչպես Ուռհայի հայերի, այնպես էլ այդ քաղաքով անցնող աքսորյալների շարասյուների տառապանքները թեթևացնելու համար: Ոմանց կողմից արվում էր նույնիսկ այն, ինչ կատարելապես անհնար էր թվում: Բ. Էքարտն, օրինակ, տեղյակ լինելով որբանոցին պատկանող գորգի ֆաբրիկայի ջրհորում թաքնված մի քանի հայերի մասին, չնայած շենքում թուրք զինվորների մշտական ամակայությանը, շաբաթներ շարունակ նրանց սնունդ էր մատակարարում, իսկ հետագայում օգնեց նաև դիմել փախուստի:<sup>55</sup> Իսկ Կ. Յեպեն 1915 թ-ից մինչև մինչև 1917 թ. վերջը գաղտնի թաքստոցում պահելով՝ կարողացավ փրկել մեկ տասնյակ հայ տղամարդկանց կյանքը: 1916 թ. հուլիսից, երբ հայ ժողովրդի աքսորն արդեն փաստացիորեն ավարտվել էր, բազմաթիվ կանայք և աղջիկներ, որոնք շարասյուներից ետ էին ընկել կամ փախչելով՝ ապաստանել աքսորաճանապարհի մերձակա գյուղերում, հետզհետե սկսեցին վերադառնալ մոտակա քաղաքները, և այդ թվում նաև Ուռհա: Աքսորը հաղթահարած այդ դժբախտները գտնվում էին անասելի ծանր վիճակում: Գոյատևած միջոցներ գտնելու հույսով վերադառնալով քաղաք՝ նրանք, սակայն, հարկադրված էին նոր դաժան հուսախաբություններ ապրել, քանի որ օրենքից դուրս հայտարարված ժողովրդի մնացորդների հետապնդումը շարունակվում էր նույն հետևողականությամբ: Այս անգամ, սակայն, աքսորի փոխարեն գործի էր դրվել բռնի մահմեդականացման մեքենան, որից խուսափել քչերին էր հաջողվում: Կրոնափոխությունը, սակայն, ընձեռում էր սոսկ գոյատևած իրավունք, մինչդեռ անօթևան, սովահար և հուսալքված մարդկանց գոյատևումն անհնար էր առանց կանոնավոր նյութական աջակցության: Մի առաջադրանք, որի լուծմանն իրենց ողջ ուժերով նվիրվեցին Կյունցլեր ամուսինները: Եթե նկատի առնենք, թե որպիսի արագությամբ էր վերադարձողների թիվն աճում, կարող է պարզ դառնալ, թե որքան ծանր էր ստեղծված իրադրությունը: Եթե, օրինակ, միայնակ և անապաստան որբերի թիվն Ուռհայում 1916 թ. հոկտեմբերի 10-ի դրությամբ 380 էր, ապա դեկտեմբերին այն հասել էր արդեն 750-ի:<sup>56</sup> 1917 թ. հունվարին այնտեղ կային 1300, մարտին 2028, իսկ հուլիսին շուրջ 2600 որբ երեխաներ,<sup>57</sup> որոնք առանց շուտափույթ օգնության կդատապարտվեին սովամահության:

Երկրորդ ենթագլուխը լուսաբանվում են աշխարհամարտի տարիներին հայ ժողովրդի զանգվածային բնաջնջումը կասեցնելու նպատակով Լեփսիուսի և նրա հավատարիմ աշխատակիցների կողմից

<sup>55</sup> Էքարտ, Բ., «Ապրած օրերը Ուռհայում», Երևան, 1990, էջ 50-56:  
<sup>56</sup> Տե՛ս Nachrichten aus dem Hilfswerk, „Der Christliche Orient“, 1917, էջ 11:  
<sup>57</sup> Schäfer R., Geschichte..., էջ 97:

գործադրված ջանքերը: Մանրամասն պարզաբանումներ են կատարվում նրա՝ 1915 թ-ին Կ. Պոլիս կատարած այցելության, էնվերի հետ հանդիպման, ինչպես և վերադարձից հետո կառավարությանն՝ ակտիվ հայանպաստ դիրքորոշման մղելու նպատակով նրա կողմից իրագործված միջոցառումների մասին: Երբ, սակայն, այդ ամենն էական արդյունքներ չտվեց, նա վճռեց իր տեղեկությունները մատչելի դարձնել լայն հասարակայնությանը, որի միջոցով նա հույս ուներ կառավարության վրա հասարակական ճնշում ստեղծել, հակազդել թուրքական լրատվությանը և բացի այդ ավետարանական համայնքներին դրդել հայ քսորայալներին օգնելու նպատակով կատարելու մեծածավալ հանգամանություններ:<sup>58</sup> Ատենախոսությունում մանրամասն պարզաբանված է այդ նպատակով Լեփսիուսի կողմից «Der Christliche Orient»-ում իրականացված մեծածավալ տեղեկատվական գործունեությունը: Քանի որ, սակայն, պարբերականը գրաքննության ճնշման պայմաններում հասարակության իրազեկման նպատակին ըստ հարկի ծառայել չէր կարող, նա վճռեց դիմել ստեղծված իրավիճակում ամենահամարձակ և ազդու միջոցին. այն է՝ իր հավաքած տեղեկություններն առանձին գրքով հրատարակել և գաղտնի առաքել քահանայություններին ու առավել ազդեցիկ հասարակական շրջաններին:<sup>59</sup> 1916 թ. գարնանն աշխատությունը՝ «Տեղեկագիր Թուրքիայում հայ ժողովրդի դրության մասին» վերնագրով 20500 տպաքանակով պատրաստ էր առաքման,<sup>60</sup> երբ դարձյալ խոչընդոտներ առաջացան... այս անգամ արդեն ԳԱԱ-ում: Լեփսիուսի այդ հանդուգն ձեռնարկը դարձավ բարոյականության և պետական քարոզչության անհամատեղելիության այն ճակատագրական փորձաքննությունը, որը նրա գործընկերներից շատերը չկարողացան հաղթահարել, և որն անխուսափելիորեն պետք է հանգեցներ նրանց պառակտմանը: ԳԱԱ-ի հոգաբարձությունը, որն իր մարտի 6-ի նիստում վճռել էր ստանձնել գրքի առաքումը՝ հոգալով նաև դրա համար անհրաժեշտ՝ մոտ 4000 մարկ կազմող ծախսերը, կարճ ժամանակ անց, մարտի 31-ին իր որոշումից հրաժարվեց՝ դա պատճառաբանելով այն հանգամանքով, աշխատության տարածումը կարող էր հայ ժողովրդի համար «բացասական հետևանքներ» ունենալ՝ պատճառ դառնալով նոր՝ ավելի սաստիկ հալածանքների:<sup>61</sup> Ատենախոսությունում փաստացիորեն հիմնավորվում է, որ ԳԱԱ-ի հոգաբարձության դիրքորոշումն իրականում թելադրված էր ոչ թե «հայ

<sup>58</sup> Lepsius J., Der Todesgang..., էջ XXVI:

<sup>59</sup> Lepsius J., Meine Mission, „Mitteilungen...“, 1918, էջ 50:

<sup>60</sup> Տե՛ս Lepsius J., Bericht über die Lage des Armenischen Volkes in der Türkei, Potsdam, 1916.

<sup>61</sup> Տե՛ս Lepsius J., Meine Mission, „Mitteilungen...“, 1918, էջ 50:

ժողովրդի դրությունն առավել չճանրացնելու» մտահոգությամբ, այլ Գերմանիայի պետական և եկեղեցական ազդեցիկ շրջանների պահանջներին չընդդիմանալու միտումով: Ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, հոգաբարձությունը մտադիր չէր բավականանալ աշխատության առաքման պատասխանատվությունն իրենից վանելով և պետական քարոզչության դրոմամբ ջանում էր բոլոր հնարավոր միջոցներով խոչընդոտել Լեփսիուսի անձնական նախաձեռնությամբ շարունակվող հայօգնության աշխատանքները: Ուստի որքան էլ վերջինիս համար ծանր էր, նա հարկադրված էր մեկընդմիջտ հրաժարվել իր ընկերությունից:<sup>62</sup> Յուլիսի 1-ին, երբ Լեփսիուսը ներկայացրեց իր հրաժարականը, ընկերությունից դուրս եկավ նաև Ռ. Շեֆերը:<sup>63</sup> Առժամանակ հետո ԳԱԱ-ն լքեցին Լեփսիուսին հավատարիմ մնացած մի շարք այլ աշխատակիցներ ևս, որոնք նրա հետ միասին շարունակեցին զբաղվել օգնության աշխատանքներով:<sup>64</sup> Ինչ վերաբերում է հիշյալ տեղեկագրին, ապա Լեփսիուսը, միայնակ կարողանալով հայթայթել առաքման միջոցները, իսկույն եթ ձեռնամուխ եղավ այդ գործին: Յուլիսին աշխատությունն ամբողջությամբ առաքվեց Գերմանիայի ավետարանական քահանայություններին, հեղինակավոր թերթերի խմբագրություններին և հասարակական ազդեցիկ շրջաններին:<sup>65</sup> Երբ առաքումն ավարտվել էր, Լեփսիուսն օգոստոսին մեկնեց Յուլանդիա<sup>66</sup> քաջ գիտակցելով, որ հայրենիքում այլևս չէր կարող հայ ժողովրդի համար ազատ գործել:<sup>67</sup> Ատենախոսությունում հանգամանալից լուսաբանվում են Յուլանդիայում Լեփսիուսի կողմից իրագործված աշխատանքները: Իսկ ինչ վերաբերում էր տեղեկագրին, ապա չնայած այն բռնագրավման ենթարկվեց, սակայն արդեն առաքվել էր և խիստ մեծ դեր խաղաց հասարակայնությանն իրազեկելու հարցում: Լեփսիուսն իրավամբ կարողացավ ճեղքել թուրքական գործակալությունների և նրանց կապկող գերմանական լրատվամիջոցների կողմից կազմակերպված լրատվական շրջափակումը Չայաստանում կատարվող իրադարձությունների վերաբերյալ: Նրա շուրջ համախմբվեցին

<sup>62</sup> Տե՛ս Lepsius J., Meine Mission, „Mitteilungen...“, 1918, էջ 53:

<sup>63</sup> Տե՛ս Persönliches, „Mitteilungen...“, 1917, էջ 4:

<sup>64</sup> Դրանք դարձյալ կազմակերպական հիմքերի վրա դնելու նպատակով Լեփսիուսը որոշ ժամանակ անց ստեղծեց մի նոր ընկերություն՝ «Դր. Լեփսիուսի արևելյան առաքելություն»-ը, որը զինադադարից հետո օրինականացվելով՝ դարձավ մասխիմում ԳԱԱ-ին հանձնարարված առաքելության արժանի ժառանգորդը:

<sup>65</sup> Lepsius J., Der Todesgang..., էջ XXVII:

<sup>66</sup> Lepsius J., Persönliches, „Der Orient“, 1925, էջ 104:

<sup>67</sup> Schäfer R., Geschichte..., էջ 92:

բազմաթիվ հասարակական շրջաններ, որոնց աջակցությամբ նա Ուռհայի իր վաղեմի աշխատակիցների միջոցով ձեռնամուխ եղավ եղեռնից մազապուրծ, 1916 թ. վերջից Թուրքիայի մեծ քաղաքներում դարձյալ ի հայտ եկող հազարավոր հայ որբերի և այրիների փրկության գործին:

Երրորդ ենթագլուխը նվիրված է Լեփսիուսի կողմից առաքվող միջոցներով Ուռհայում իրականացվող օգնության աշխատանքների լուսաբանմանը: Քանի որ ողջ քաղաքում ցրված ավելի քան 2700 երեխաներին հավաքելը և որբանոց հիմնելն անհնար էր, Կյունցլերը սկզբում հարկադրված էր բավարարվել նրանց և հազարավոր այրիներին առձեռն ապրուստի համար պարբերաբար դրամ հատկացնելով:<sup>68</sup> Չուգահեռաբար նա հայթայթում և բաշխում էր նաև ալյուր, այլ կենսամթերքներ, հիվանդներին ցույց էր տալիս բուժսպասարկում, տրամադրում դեղորայք և այլն:<sup>69</sup> Նա այդ ամենը հարկադրված էր կատարել մեծ խոչընդոտների և վտանգների հաղթահարման գնով, որոնք ատենախոսությունում մանրազնին լուսաբանվում են: Կյունցլերին հաջողվում էր պարբերաբար որոշ գումարներ ուղարկել նաև Ռակա, Բիրեջիկ և Ադիաման և դրանք բաժանել այնտեղ գտնվող հայերին: Ըստ հնարավորին դրամական օգնություն էր ցուցաբերվում նաև Ուռհայի շրջակա գյուղերում գտնվող չքավոր հայերին: Օգնության աշխատանքներում իր մեծ ներդրումն էր բերում նաև Կյունցլերի կինը, որը բազմաթիվ որբերի ասորական ընտանիքներում տեղավորելուց հետո, չնայած որբանոցի ստեղծման պաշտոնական խիստ արգելքներին, 1917 թ-ին համարձակվեց նաև երկու տներ վարձել և դրանք լցնել որբերով:<sup>70</sup> Այդ գաղտնի որբանոցներն անընդմեջ գործեցին մինչև պատերազմի ավարտը: Կյունցլերի և նրա գործընկերների աշխատանքն, ինչպես հարկն է, ծառայեց իր նպատակին՝ Եղեռնը վերապրած հազարավոր հայ որբերին ու կանանց պատերազմի տարիներին փրկելով սովամահությունից: Այդ ամենը հնարավոր դարձավ Լեփսիուսի աջակցության, ինչպես և Շվեյցարիայից ու Ամերիկայից կատարվող առաքումների շնորհիվ, որոնց ընդհանուր ծավալը պատերազմի տարիներին կազմեց 1,3 մլն շվեյցարական ֆրանկ:<sup>71</sup>

Երրորդ գլուխը, որ վերնագրված է՝ «Յոհ. Լեփսիուսի և նրա կազմակերպության գործունեությունն առաջին աշխարհամարտից հետո (1918-1943 թթ.)», բաղկացած է 5 ենթագլուխներից, որոնցից առաջինում լուսաբանվում է Լեփսիուսի հայամապստ

<sup>68</sup> Künzler J., Im Lande..., էջ 87:

<sup>69</sup> Lepsius J., Aus der Arbeit, „Mitteilungen aus der Arbeit...“, 1918, էջ 55-56:

<sup>70</sup> Անդ, էջ 36:

<sup>71</sup> Künzler J., Im Lande..., էջ 88:

կազմակերպական և հրապարակախոսական գործունեությունը հետզհետե դարձան առաջին տարիներին: Ձինադարի հաստատումից հետո Լեփսիուսը հանդես եկավ երիտթուրքերի ոճրագործությունները մերկացնող մի բազում հրապարակումներով, և բացի այդ 1918 թ. նոյեմբերից ձեռնամուխ եղավ Հայկական հարցի վերաբերյալ ԱԳՆ-ի և Կ. Պոլսի դեսպանության դիվանագիտական տեղեկագրերի ուսումնասիրմանը, որոնք առանձին ժողովածուով, «Գերմանիան և Հայաստանը 1914-1918 թվականներին. դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու» վերնագրով լույս տեսան 1919 թ. մայիսին:<sup>72</sup> 444 փաստաթուղթ ընդգրկող այդ մեծարժեք ժողովածուի միջոցով հանգամանալից փաստարկում ստացան հայ ժողովրդի հանդեպ իրագործված ոճրագործությունները, դրանց ծրագրայնությունը, ծավալը, նպատակներն ու իրականացման եղանակները: Փաստաթղթերի ուսումնասիրությունը փաստեց, որ Լեփսիուսի 1916 թ. հրատարակված տեղեկագրի նյութերը համապատասխանում էին իրականությանը:<sup>73</sup> Ուստի նա ձեռնամուխ եղավ այդ աշխատության վերահրատարակման գործին, որը «Հայ ժողովրդի մահուղին» վերնագրով լույս տեսավ 1919 թ-ին, փաստաթղթերի լույսընծայումից կարճ ժամանակ անց:<sup>74</sup> 1920 թ. փետրվարից Լեփսիուսն ԱԳՆ-ի առաջարկությամբ երկու այլ անձանց հետ միասին ձեռնամուխ եղավ նաև Գերմանիայի՝ 1882-1914 թթ. բոլոր դիվանագիտական փաստաթղթերի հրատարակմանը, որոնք 40 հատորներով ներկայացնում էին Գերմանիայի արտաքին քաղաքականությունը վերոնշյալ շրջանում:<sup>75</sup> Այդ հրապարակումն անկասկած պետք է համարել Լեփսիուսի նախորդ աշխատությունների տրամաբանական շարունակությունը, որտեղ նա տնօրինում էր Արևելքի, մասնավորապես Թուրքիայի, Ռուսաստանի ու Բալկանների բաժինը: Լեփսիուսն իր հրապարակախոսական գործունեությունը շարունակում էր նաև թռուցիկների միջոցով, որոնք հրատարակվում և առաքվում էին հանրությանը: Տեղեկատվությունն էլ ավելի ընդլայնելու նպատակով նա 1919 թ. մայիսից իր «Mitteilungen aus der Arbeit»-ը վերածեց ամենամսյա պարբերականի, որը կոչվում էր «Der Orient» և, ի տարբերություն նախորդի, տպագրվելով ավելի մեծ ծավալով՝ անվճար առաքվում էր այն բոլոր բարեկամներին, ովքեր տարեկան նվազագույնը 10 մարկ նվիրատվություն էին կատարում: Լեփսիուսի

<sup>72</sup> St'u Lepsius J., Deutschland und Armenien. Sammlung diplomatischer Aktenstücke, Potsdam, 1919:

<sup>73</sup> St'u Lepsius J., Was hat man den Armeniern getan?, „Mitteilungen aus der Arbeit...“, 1918, էջ 118:

<sup>74</sup> St'u Lepsius J., Der Todesgang des armenischen Volkes, Potsdam, 1919.

<sup>75</sup> St'u Die Große Politik der Europäischen Kabinette, Berlin 1922-1927:

նոր ընկերությունը, որի կանոնադրության գրանցումը տեղի ունեցավ 1921 թ. ապրիլի 26-ին,<sup>76</sup> իր գործունեությունը սկսեց Գերմանիայում շարունակ խորացող սոցիալ-տնտեսական ճգնաժամի և դրամի արժեզրկման պայմաններում, ինչը բնականաբար մեծ հարված էր նաև օգնության աշխատանքներին, քանի որ գերմանական դրամով կատարվող նվիրատվությունները կորցնում էին իրենց նշանակությունը: Ատենախոսությունում մանրագնին լուսաբանվում են այն միջոցառումները, որոնց շնորհիվ Դր. Լեփսիուսի արևելյան առաքելությունը կարողացավ հաղթահարել ծանր ճգնաժամը և թևակոխել 1924 թ.:<sup>77</sup>

Երկրորդ ենթագլխում պարզաբանվում են զինադադարից հետո Լեփսիուսի աշխատակիցների կողմից Ուռհայում իրականացված օգնության աշխատանքները:

Զինադադարի հաստատումից և Անտանտի կողմից Կ. Պոլսի գրավումից հետո Թուրքիայի գավառներն ուղարկվեցին կարգադրություններ մահմեդականների տներում գտնվող բոլոր հայերին ազատ արձակելու վերաբերյալ:<sup>78</sup> Այդպիսով ազատությունը վերջապես իրականություն էր դառնում նրանց համար, և շուտով մեծ քաղաքներում, այդ թվում նաև Ուռհայում ի հայտ եկան հարյուրավոր նոր որբեր և այրիներ, որոնց թիվը շարունակ ավելանում էր: Քանի որ Ուռհայում հայկական համայնք չկար, այնտեղ ազատ արձակվողները տարվում էին Կյունցլերի և նրա կնոջ մոտ, որոնք ստանձնում էին նրանց խնամքն ու վերահսկողությունը: Հետպատերազմյան առաջին ամիսները Կյունցլերի համար հատկանշվեցին նաև տքնաջան բժշկական գործունեությամբ, որն ատենախոսությունում մանրամասնորեն քննության է ենթարկվում: Վերջնական խաղաղության ուշացմամբ պայմանավորված անորոշության պարագայում Թուրքիայի իրադրությունը շարունակ ավելի անպաստ էր դառնում որբախնամ և բարեգործական աշխատանքների համար: Քենալական կառավարությունը 1921 թ-ից սկսեց բացահայտ արգելքներ հարուցել Թուրքիայում գտնվող քրիստոնեական քարոզչական և բարեգործական ընկերությունների առջև՝ հարկադրելով նրանց երկրից հեռանալ:<sup>79</sup> Որբախնամ ամենամեծ՝ Near East Relief կազմակերպությունը, որը, բնականաբար, առաջինների թվում պետք է մտահոգված լիներ անկանխատեսելի հետևանքներով հղի այդ իրավիճակով, 1922 թ. գարնանը վճռեց Թուրքիայում իր խնամքի տակ գտնվող որբերին

<sup>76</sup> Lepsius J., Persönliches, „Der Orient“, 1925, էջ 105:

<sup>77</sup> Jahresrechnung von Dr. Lepsius OM (Armenisches Hilfswerk) für das Jahr 1924, „Der Orient“, 1925, էջ 31:

<sup>78</sup> Künzler J., Im Lande..., էջ 104:

<sup>79</sup> Schäfer R., Geschichte..., էջ 110:

տեղափոխել ոչ թուրքական անվտանգ տարածքներ, մասնավորապես Հունաստան և Սիրիա: Հաշվի առնելով Կյունցլերի փորձառությունը՝ ընկերությունը նրան առաջարկեց մասնակցել այդ ձեռնարկի իրականացմանը, որը և ձեռնամուխ եղավ այդ գործին:<sup>80</sup> Իսկ աշնանը, երբ Թուրքիայում բոլոր քրիստոնյաներին թույլատրվեց արտագաղթել, և այնտեղ գտնվող հայության վերջին մնացորդները նույնպես սկսեցին հեռանալ հարևան երկրներ, եկավ նաև Ուռհայի հիվանդանոցի փակման ժամանակը, որը տեղի ունեցավ 1922 թ. հոկտեմբերի 1-ին: Այնուհետև Կյունցլերը և իր կինը, ընդունելով NER-ի կառույցում իրենց գործունեությունը շարունակելու առաջարկը՝ մեկնեցին Լիբանան և այնտեղ 1923 թ. փետրվարի 6-ից ստանձնեցին Ղազիրում հիմնված նոր որբանոցի ղեկավարումը:<sup>81</sup> Ճակատագրի բերումով շուտով այնտեղ պետք է ուղղվեր նաև Լեփսիուսի փրկարար առաքելությունը:

1924 թ-ին Լեփսիուսի ընկերության տնտեսական դրությունը նկատելիորեն կայունանում էր: Ֆինանսական ճգնաժամի հաղթահարմամբ, այնուամենայնիվ, արտերկրում օգնության աշխատանքների վերահիմնման բոլոր խոչընդոտները չվերացան: Թուրքահայ փախստականների և որբերի զանգվածները գտնվում էին Անտանտի, մասնավորապես Ֆրանսիայի մանդատային տարածքներում, որտեղ գերմանական կազմակերպությունները մուտք գործել չէին կարող:<sup>82</sup> Այդ արգելքի հաղթահարման ճանապարհը մեկն էր. միանալ մի՝ քաղաքական խոչընդոտներից զերծ միջազգային կազմակերպության և գործել նրա կառույցում: Առիթը կայացավ 1924 թ. օգոստոսին, երբ ժնևում կազմակերպվեց NER-ի հերթական համաժողովը, որին մասնակցեց նաև Լեփսիուսը: Համաժողովի ընթացքում ծանոթանալով NER-ի ներկայացուցիչների հետ՝ նա վճռեց ստանձնել այդ կազմակերպության հովանավորության տակ գտնվող՝ որբերի մի մասի խնամքը:<sup>83</sup> Ընտրությունը կանգ առավ Ղազիրի որբանոցի վրա, որը գտնվում էր Կյունցլերի ղեկավարման ներքո, և NER-ի հետ կայացած պայմանավորվածության համաձայն այդ որբանոցում ապրող 450 երեխաները հանձնվեցին Լեփսիուսի ընկերության խնամակալությանը:<sup>84</sup> Վերջինս պարտավորվում էր հոգալ երեխաների սննդի և հագուստի ծախսերը, որոնք կազմում էին որբանոցի ընդհանուր ծախսերի մոտ կեսը, իսկ ինչ վերաբերվում էր

<sup>80</sup> Künzler J., Dreißig Jahre..., էջ 104: Հմմտ. Lepsius J., Unsr 400 Waisenkinder, „Der Orient“, 1924, էջ 75:

<sup>81</sup> Künzler J., Ein Gedächtnis-Waisenhaus, „Orient im Bild“, 1928, էջ 65:

<sup>82</sup> Schäfer R., Geschichte..., էջ 111:

<sup>83</sup> Lepsius J., Unsr 400 Waisenkinder, „Der Orient“, 1924, էջ 73:

<sup>84</sup> Künzler J., April-Bericht 1926 von unserem Waisenhaus, „Der Orient“, 1926, էջ 98:

մյուս բուժսպասարկման, կառավարման և դասավանդման ծախսերին, ապա դրանք պետք է շարունակեր կատարել NER-ը:<sup>85</sup>

Երրորդ ենթագլխում պարզաբանվում է Լեփսիուսի և նրա ընկերության գործունեությունը 1920-ական թվականներին: Շարունակելով հասարակայնության ուշադրությունը բեռել բազմահազար հայ որբերի աղետալի վիճակի և օգնության աշխատանքների անհրաժեշտության վրա, Լեփսիուսը համակ ուշադրությամբ էր հետևում խաղաղության գործընթացին՝ իր հրապարակախոսական ավյունով ձգտելով նպաստել հայ ժողովրդին դեմ գործված ոճրագործության դատապարտման և Անտանտի կողմից բազմիցս խոստացված՝ արդարացի հատուցման գործին: Սևրի պայմանագրի վիժեցումից և հարցի մի շարք նոր քննարկումներից հետո, սակայն, ինչպես հայտնի է, 1923 թ. հուլիսի 24-ին Լոզանում կնքված պայմանագրով նույնիսկ «Ազգային օջախի» գաղափարը մերժվեց, և Հայկական հարցը մեծ տերությունների քաղաքական օրակարգից դուրս եկավ:<sup>86</sup> Լեփսիուսը հույսերի ու հուսախաբությունների այդ շրջապատւյտում շարունակ հայ ժողովրդի հետ էր՝ հրապարակախոսի իր անհատում ավյունն ի սպաս դնելով նրա շահերի պաշտպանությանը: Լոզանի համաժողովի վերաբերյալ իր նկատառումները նա ներկայացրեց «Հայկական հարցը Լոզանում», «Իրադրությունը Հայաստանում» և մի շարք այլ հոդվածներում: Նրա համոզմամբ համաժողովը ոչ այլ ինչ էր, քան տասնամյակներ ի վեր մեծ տերությունների «կռվախնձորը» դարձած Հայկական հարցի շահարկումների տրամաբանական ավարտը, քանի որ Հայկական հարցի և հայ ժողովրդի ողբերգությունների պատմությունը Լեփսիուսի գնահատմամբ սպառիչ կերպով փաստում էր, որ մեծ տերությունների քաղաքագետները «ճամարտակելով» մարդասիրության մասին՝ իրականում հետապնդում էին միայն իրենց նյութական շահերը:<sup>87</sup> Այնուամենայնիվ Լեփսիուսն այն կարծիքին էր, որ Թուրքիան իր հայահալած քաղաքականությամբ ինքնական դատապարտվեց տնտեսական փլուզման, քանի որ նրա տնտեսության հիմնական լուծը կրում էին հայերը: Ավելին, Լեփսիուսի համոզմամբ, Հայկական հարցը Լոզանում ոչ թե լուծվել, այլ միայն առկախվել էր, և Թուրքիան չկարողացավ օգտագործել նվազագույն կորուստներով այդ հարցից ազատվելու՝ իրենց տրված պատմական հնարավորությունը, որի համար նա ապագայում ստիպված պետք է լիներ անհամեմատ ավելին հատուցել:<sup>88</sup> Ապագան անշուշտ պետք է փաստեր, թե որքան իրատես

<sup>85</sup> Hetzel G., Aus der Arbeit, „Orient im Bild“, 1928, էջ 30:

<sup>86</sup> Lepsius J., Die armenische Frage in Lausanne, „Der Orient“, 1923, էջ 2:

<sup>87</sup> Տե՛ս Die armenische Frage in Lausanne, „Der Orient“, 1923, էջ 3:

<sup>88</sup> Տե՛ս Die Lage in Armenien, անդ, էջ 18-19:

էին Լեփսիուսի կանխատեսումները, որը հետագայում շարունակում էր ակնդետ ուղեկցել հայ ժողովրդի ճակատագրին և նրա հետ միասին չհաշտվելով Լոզանի համաժողովի որոշումների հետ՝ իր կարողությունն ի սպաս դնել նրան հետադուր ևս զորավիզ լինելու: Ըստ այդմ պարբերականը շարունակում էր իր էջերը լայնորեն տրամադրել արևմտահայության ապրած ողբերգությունների, ինչպես նաև սփյուռքում և Խորհրդային Հայաստանում տիրող իրադրության լուսաբանմանը:<sup>89</sup> Ատենախոսությունում հանգամանալից կերպով լուսաբանվում է նաև այն դերն ու նշանակությունը, որ Լեփսիուսն ունեցավ Ս. Թեհլերյանի դատավարության ընթացքում: 1924-26 թթ. Լեփսիուսն իր առաջնագույն խնդիրը համարում էր հայ ժողովրդի հանդեպ գործադրված «ոճրագործությունների» նորագույն՝ 1919-23 թվականներն ընդգրկող շրջանի լուսաբանումը, երբ արևմտահայության՝ եղեռնը վերապրած մնացորդները նույնպես հարկադրված եղան լքել իրենց պատմական հայրենիքը և փրկություն որոնել տարագրության մեջ:<sup>90</sup> Նա ուներ նաև այլ կարևոր ծրագրեր ու մտահղացումներ որոնք, սակայն, այլևս չէր կարող իրականացնել: 1925 թ-ին նրա առողջական դրությունը սկսեց կտրուկ վատթարանալ՝ հոկտեմբերի 28-ին հարկադրելով բուժման նպատակով մեկնել Իտալիայի Մերանո քաղաքը,<sup>91</sup> որտեղ 1926 թ. փետրվարի 3-ին նա վախճանվեց:<sup>92</sup> Նրա ընկերությունը, սակայն, շարունակեց նրա մեծ գործը: Ենթագլխում ըստ ամենայնի պարզաբանվում են ընկերության կողմից 20-ական թթ. երկրորդ կեսին իրագործված համալրումները, կառուցվածքային փոփոխություններն ու կազմակերպական նախածեռնությունները, և, իհարկե, հրապարակախոսական գործունեությունը, որն, ինչպես նախկինում, գերզանացապես նվիրված էր Հայկական հարցի, հայ ժողովրդի արդի դրության և նրա հոգևոր-մշակութային արժեքների լուսաբանմանը: Ընկերությունը սուր քննադատության էր ենթարկում նաև Գերմանիայի որոշ շրջաններում շարունակ իշխող «թուրքոմանիան», որի հետևանքով փորձեր էին կատարվում հայ ժողովրդի ողբերգությունները ներկայացնել «ծուռ» հայելու մեջ և նույնիսկ արդարացնել դրանք: Այդ «թուրքոմանիայով» առաջնորդվող հրապարակումների սնանկությունն առավել տեսանելի դարձնելու համար պարբերաբար ներկայացվում էին կոտորածներից փրկված անձանց կենսագրություններ և վկայություններ, որտեղ եղեռնը

<sup>89</sup> Տե՛ս Lepsius J., Krieg und Frieden, „Der Orient“, 1924, էջ 1-7; Th. W., Der Untergang von Hadjin, անդ, էջ 7-14; Abeghian A., Die Armenische Diasphora, անդ, էջ 65-69; և այլն:

<sup>90</sup> Lepsius J., Eine Bitte, „Der Orient“, 1923, էջ 41:

<sup>91</sup> Schäfer R., Geschichte..., էջ 118:

<sup>92</sup> Տե՛ս Pfarrer D. Dr. phil. Johannes Lepsius, „Der Orient“, 1926, էջ 1:

շարունակ նոր և էլ ավելի սահմանեցուցիչ կողմերով էր առարկայանում:<sup>93</sup>

Չորրորդ ենթագլուխը նվիրված է ընկերության փրկարար աշխատանքների լուսաբանմանը, որոնք 1924 թ-ից, Գերմանիայի տնտեսական ճգնաժամի հաղթահարումից հետո մեկնարկվեցին Չալեպում և Ղազիրում (Լիբանան): Քանի որ եղեռնի ընթացքում մեծ տարածում էր ստացել միջազգայնորեն արգելված՝ ստրկավաճառությունը, Ազգերի լիգան 1921 թ. սեպտեմբերին վճռեց միջոցներ ձեռնարկել մահմեդականների մոտ բռնի պահվող հայ կանանց և որբերի ազատագրման նպատակով՝ այդ հանձնարարելով մի հանձնաժողովի, որի կազմում ներգրավվեց նաև օր. Կ. Յեպեն:<sup>94</sup> 1922 թ. գարնանից հաստատվելով Չալեպում՝ Յեպեն այնտեղ հիմնեց մի կացարան, որտեղ ազատագրվածները կարող էին առժամանակ ապրել, մինչև հոգ կտարվեր նրանց հետագա ճակատագրի մասին, և այնուհետև հավաքագրելով մի շարք գործակալների՝ ձեռնամուխ եղավ ազատագրման աշխատանքներին, որոնք ծավալվեցին Դեր-էս-Չոր-Չասսիէ-Մարդին ուղղությամբ:<sup>95</sup> «Բանտարկյալների» փախուստը դյուրացնելու նպատակով նա այդ և մի շարք այլ քաղաքներում հիմնեց գաղտնի գործակալություններ, որտեղ նրանք կարող էին ընդունվել, կազդուրվել և ստանալով սննդամթերք ու դրամ՝ շարունակել իրենց ճանապարհը: 1924 թ-ին, երբ պարզ դարձավ, որ Ազգերի լիգայի կողմից կատարվող հատկացումները չէին կարող աշխատանքի հարաճուն պահանջները բավարարել, Յեպեն օգնության հասավ նաև «Դր. Լեփսիուսի արևելյան առաքելությանը»՝ 1924 թ-ից դառնալով այդ աշխատանքների մեծագույն հովանավորը: Ատենախոսությունում մանրամասն պարզաբանվում է այն մեծածավալ կազմակերպական և հրապարակախոսական գործունեությունը, որ իրագործեց ընկերությունը փրկարար աշխատանքներին արդյունավետ մասնակցելու համար: Կ. Յեպեն և նրա աջակիցների՝ մոտ 10 տարվա ջանքերի արդյունքում ազատագրվեցին և համակողմանի խնամքից ու ուսումնառությունից հետո հայ հավաքական կյանք վերադարձան ընդհանուր թվով՝ 1900 հայեր, որոնցից 705-ը՝ Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի միջոցներով:

Չալվի առնելով Սիրիայի քաղաքներում մոլեգնող գործազրկությունը, Չալեպի հայ ճամբարաբնակների զրկալից վիճակը, ինչպես և այն, որ ազատագրվածներից շատերն ապրել էին գյուղական միջավայրում և քաղաքային կյանքին հեշտությամբ չէին կարող

<sup>93</sup> Տե՛ս Jeppe K., Seltsame Rettung, „Orient im Bild“, 1927, էջ 28-31:

<sup>94</sup> Jeppe J., Vom Hilfswerk für die verschleppten armenischen Frauen und Kinder..., „Der Orient“, 1923, էջ 21:

<sup>95</sup> Տե՛ս Schäfer R., Geschichte der Deutschen Orient-Mission, Potsdam, 1932, էջ 113:

հարմարվել,<sup>96</sup> Յեպեն 1924 թ. գարնանը Ռակայի և Թել-Աբիաթի միջև ընկած տարածքում հիմնեց նաև երկու գյուղավաններ՝ Թել-Սամենը,<sup>97</sup> և Թել-Արմենը,<sup>98</sup> որտեղ բնակվեցին ճամբարաբնակների և նաև ազատագրված երիտասարդների ու աղջիկների մի մասը:<sup>99</sup> Միաժամանակ նա կարևոր քայլեր ձեռնարկեց ճամբարում մնացած՝ գործազրկության և աննախադեպ թանկացումների պայմաններում սովամահության դատապարտված ճամբարաբնակների փրկության համար, որոնց թիվը 1926 թ. հասնում էր 17 հազարի:<sup>100</sup> Նրան այդ հարցում ևս օգնության հասավ Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ն՝ ստանձնելով ճամբարի որբ կամ առնվազն հայրերից զրկված՝ շուրջ 100 երեխաների խնամքը:<sup>101</sup> Յեպեն, սակայն, վճռեց այդ երեխաների խնամքն իրականացնել ոչ թե որբանոցի, այլ ընտանեփառների հիմնման միջոցով՝ որբերին հանձնելով միայնակ այրիների խնամքին:<sup>102</sup> Այդպիսով հնարավորություն ստեղծվեց որբանոցի համար հատկացված միջոցներով հոգ տանել նաև Չալեպի՝ ոչ պակաս անօգնական վիճակում գտնվող այրիների համար, որոնք այլևս դրսում աշխատանք որոնելու անհրաժեշտություն չունեին:<sup>103</sup> Իսկ որ առավել ուշագրավ է, նոր մեթոդը Յեպեն հնարավորություն ընձեռեց շուրջ կիսով չափ կրճատել որբերի խնամքի համար նախատեսված ծախսերը և խնամքի տակ վերցնել անհամեմատ ավելի մեծ թվով երեխաների ու համապատասխանաբար նաև այրիների:<sup>104</sup> Եթե նա 1927 թ. վերջին հավաքագրել էր միայն 100 որբերի, ապա 1928-33 թթ. այդ թվակազմի համար նախատեսված միջոցներով՝ նրա «որբանոցում» խնամվում էին համապատասխանաբար 220, 170, 207, 164, 173 և 163 երեխաներ:<sup>105</sup>

Չաջորդ կարևոր առաքելությունը, որ ստանձնեց Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ն, Չալեպի ճամբարի առավել անապահով ընտանիքների երեխաների սնուցումն էր: Ընկերության միջոցներով 1929 թ. կյանքի կոչվեց այսպես կոչված՝ «Կերակրվող երեխաների» աշխատաճյուղը, որն անընդմեջ գործեց նաև հաջորդ տարիներին, և որի շրջանակներում հիշյալ երեխաները Կ. Յեպենի հիմնած խոհանոցում օրական մեկ

<sup>96</sup> Jeppe K., Rettung aus muhammedanischer Sklaverei. Wer hilft dazu?, „Der Orient“, 1924, էջ 62:

<sup>97</sup> Jeppe K., Die Armenier in Syrien, „Der Orient“, 1924, էջ 86-87:

<sup>98</sup> Jeppe K., Ein Jahr Rettungsarbeit, „Der Orient“, 1926, էջ 71:

<sup>99</sup> Տե՛ս Karen Jeppe's Arbeit, „Der Orient“, 1926, էջ 6:

<sup>100</sup> Ամ, էջ 7-8:

<sup>101</sup> Jeppe K., System und Ziel der Waisenpflege in Aleppo, „Orient im Bild“, 1929, էջ 2:

<sup>102</sup> Schütz P., Fr. Jeppe's Witwenkolonie bei Aleppo, „Orient im Bild“, 1928, էջ 56-57:

<sup>103</sup> Schütz P., Fr. Jeppe's Witwenkolonie bei Aleppo, „Orient im Bild“, 1928, էջ 56:

<sup>104</sup> Schäfer R., Jahresbericht der Dr. Lepsius DOM 1928, ամ, էջ 22:

<sup>105</sup> Տե՛ս ընկերության հաշվետվությունները „Orient im Bild“-ի համապատասխան տարեգրքերում:



անգամ առատ և որակյալ սնունդ էին ստանում: Եթե նկատի առնվի, որ 1929-33 թթ. ամենօրյա տաք սնունդով այնտեղ ապահովված էին համապատասխանաբար՝ 143, 162, 129, 150 և 124 երեխաներ, ապա ակնհայտ կդառնա, թե այդ աջակցությունը ինչպիսի նշանակություն ուներ Հալեպի սովահարի հայ ընտանիքների համար: Դր. Լեփսուսի ԳԱԱ-ն զուգահեռաբար շարունակում էր զարգացնել նաև ամենամյա իրեղեն նվիրատվությունների ավանդույթը, որոնք ընդլայնվելով՝ 1928 թ-ից դարձան Հալեպում և Ղազիրում իրականացվող օգնության աշխատանքների կարևոր բաղկացուցիչ մասը:<sup>106</sup> Վերոնշյալից զատ, ատենախոսությունում մանրագին կերպով լուսաբանվում են նաև այն օգնության աշխատանքները, որոնք կատարվում էին Լեփսուսի ընկերության և դանիացի ու շվեյցարացի բարեկամների համատեղ ուժերով: Այն հանգամանքը, որ նշված օժանդակությունների շնորհիվ հաջողվեց ճամբարականների դրությունը կայունացնել, Յեպեին հնարավորություն ընձեռեց դարձյալ ձեռնամուխ լինել նրանց տնտեսական անկախացման գործին:<sup>107</sup> Ըստ այդմ, Դր. Լեփսուսի ԳԱԱ-ի միջոցներով 1928 թ. գարնանը նա Եփրատից այն կողմ, Թել-Սամենից և Թել-Արմենից ոչ մեծ հեռավորության վրա, հիմնեց երրորդ գյուղը՝ Խարթ-Պետրոսը, որն ի տարբերություն նախորդների, գրեթե բացառապես հատկացվեց «փրկագնված» երեխաների բնակությանը, իսկ 1930 թ. գարնանը Խարթ Պետրոսից հարավ ընկած մի վայրում հիմնվեց չորրորդ՝ Թինեհ գյուղը, որի բնակեցման սկզբնական փուլում պահանջվող ծախսերի մեկ քառորդը, հատկացվեց Դր. Լեփսուսի ԳԱԱ-ի կողմից:<sup>108</sup> Ատենախոսությունում ըստ ամենայնի պարզաբանում են ստանում հիշյալ գյուղերի բնակչության կրթության, բուժսպասարկման և մասնագիտական պատրաստվածության բարձրացման նպատակով Լեփսուսի ընկերության նյութական միջոցներով իրագործված միջոցառումները: Ուրախալի հաջողություններ արձանագրվեցին նաև նաև Ղազիրում, որտեղ ընկերությունը դեռ 1924 թ. ստանձնել էր ամերիկյան NER կազմակերպության որբանոցում գտնվող 450 երեխաների խնամքը կամ, ավելի ստույգ, այդ խնամքի շուրջ կեսը՝ հագուստի և սննդի համար կատարվող ծախսերը: 1928 թ. սեպտեմբերի 1-ից, երբ NER-ը դադարեցրեց բոլոր որբայնամ աշխատանքները, որբանոցն ամբողջովին փոխանցվեց ընկերության պատասխանատվության ներքո, և հաստատության ղեկավարումը ստանձնեց Ա. Կավուքջյանը, որն իր կնոջ՝ գերմանուհի Ռ. Դեմնիցի հետ միասին մեկնելով Ղազիր՝ 1929 թ. հոկտեմբերից անցավ իր

<sup>106</sup> Անդ:

<sup>107</sup> Jeppe K., Ein Jahr Rettungsarbeit, „Der Orient“, 1926, էջ 71:

<sup>108</sup> Տե՛ս Jeppe K., Die Dorfarbeit, trotz Hungers und Dürre gerettet, „Orient im Bild“, 1933, էջ 34, ծան.-ը:

պարտականությունների կատարմանը:<sup>109</sup> Կազմակերպությունը, սակայն, ձգտում էր երեխաների մեջ զարգացնել երկրագործական հմտություններ և նրանց կապել հողի հետ, և քանի որ Ղազիրը հողի բարձր գների պատճառով նախընտրելի վայր չէր կարող լինել, որբանոցը 1931 թ. տեղափոխվեց Քեսաբ,<sup>110</sup> իսկ 1933 թ. Քեսաբին մերձակա Կայա-Փունար բնակավայրը,<sup>111</sup> որտեղ մեծ զարգացում ստացան գյուղատնտեսական աշխատանքները:

Յինգերորդ ենթագուխը նվիրված է ընկերության կողմից 1933-1943 թթ. իրագործված աշխատանքների լուսաբանմանը: 1933 թ. Գերմանիայում իշխանության գլուխ անցած նացիոնալ-սոցիալիստական կուսակցության հակասեմիտական գաղափարախոսության զարգացման պայմաններում դարձյալ մահամբեր ամպեր կուտակվեցին հայ ժողովրդի վրա: Ձանգվածային լրատվամիջոցներում շրջանառության մեջ էր դրվել հայերի և հրեաների ռասայական նույնականության տեսակետը, որ հղի էր անկանխատեսելի հետևանքներով:<sup>112</sup> Ուստի պատահական չէ, որ ինչպես Դր. Լեփսուսի ԳԱԱ-ի, այնպես էլ հայ ժողովրդի մյուս գերմանացի բարեկամների գերխնդիրը դարձավ այդ ըմբռնումների դեմ պայքարի ծավալումը: Ընկերության պարբերականներում հրատարակվում էին ծավալուն ուսումնասիրություններ հայ ժողովրդի պատմական անցյալի և ազգաբանական, կրոնական ու լեզվամշակութային առանձնահատկությունների վերաբերյալ, որոնցով հիմնավորվում էր նրա պատկանելությունը արիական ռասային:<sup>113</sup> Չուգահեռաբար վկայակոչվում էին նաև անցյալի ականավոր գիտնականների հետազոտությունները:<sup>114</sup> Այլ բարեկամների, մասնավորապես Գերմանահայկական ընկերության հետ սերտ համագործակցությամբ ամիսներ շարունակ ծավալվող այդ գրապայքարը, որում ներգրավվեցին նաև գիտական, կրոնական և քաղաքական այնպիսի մեծ հեղինակություններ, ինչպես օրինակ, Կ. Ֆ. Լեհման-Յաուպտը, Պ. Ռոհրբախը, Յ. Ռիխտերը, Ֆոն Մաքսը, Յ. Ֆոն Լերսը և այլն, հասավ իր ցանկալի արդյունքին. հայերի և հրեաների ռասայական նույնացմանը միտող քարոզարշավը դադարեց, և 1933 թ.

<sup>109</sup> Kavoukdjian A., Bericht aus Ghasir, „Orient im Bild“, 1930, էջ 39:

<sup>110</sup> Schäfer R., Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission für 1931, „Orient im Bild“, 1932, էջ 11:

<sup>111</sup> Kavoukdjian A., Von Kessab nach Kaja Punar – und was das bedeutet, „Orient im Bild“, 1933, էջ 58:

<sup>112</sup> Տե՛ս Die Armenier – keine Juden, „Orient im Bild“, 1933, էջ 32:

<sup>113</sup> Տե՛ս Hetzel G., Wie das älteste Christenvolk zu seinem Glauben kam, անդ, էջ 34-35 և 37; Die Zugehörigkeit der Armenier zur arischen Rasse, անդ, էջ 38 և այլն:

<sup>114</sup> Տե՛ս Rassentum der Armenier, „Der Orient“, 1933, էջ 65-66:

հուլիսի 3-ին Գերմանիայի ՆԳ նախարարի հրամանագրով հայերը դասվեցին արիական ժողովուրդների շարքում՝ այդպիսով ապահովագրվելով պաշտոնավարման և այլ իրավունքների սահմանափակման օրենքներից, ինչպես և այլապես անխուսափելի դարձող ռասայական դաժան հետապնդումներից:<sup>115</sup> 1930-ական թվականներին Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ից մեծագույն ջանքեր էին պահանջվում նաև իր հայօգնության աշխատանքները շարունակելու և համաշխարհային տնտեսական ճգնաժամի ու խորացող գործազրկության պատրվակմամբ միսիոներական ընկերություններին «Ազգային ունեցվածքի վատնման» մեջ մեղադրող նոր թշնամական մտայնություններին դիմակայելու համար,<sup>116</sup> որոնք պարբերաբար ամրապնդվում էին գործով: 1932 թ. ի հայտ եկան բարեգործական հանգանակությունների առաջին օրենսդրական սահմանափակումները, իսկ 1933 թ. սեպտեմբերի 29-ին բարեգործական օգնությունների կանոնավորման պրոսական պետական կոմիսարի հրամանագրով այն հանգանակությունները, որոնք «չէին ծառայում գերմանացի ժողովրդի ծնեռային օգնության գործին», արգելվեցին:<sup>117</sup> Չնայած որոշումը հոկտեմբերի 24-ին դարձյալ չեղյալ հայտարարվեց, սակայն շուտով ի հայտ եկան նոր հրամանագրեր ևս, որոնցով վավերացված սահմանափակումները գրեթե համանշանակ էին վերոնշյալ արգելքին, իսկ 1937 թ. գարնանը ուժի մեջ մտավ մի նոր, հանգանակությունների կազմակերպումը կաթվածահար անող օրինագիծ, որով միսիոներական և բարեգործական ընկերությունների գոյությունը լրջորեն հարցականի տակ էր դրվում:<sup>118</sup> Ըստ այդ օրենքի, հանգանակություններն արգելվում էին նույնիսկ եկեղեցական արարողությունների ժամանակ, բացառություն էին կազմում միայն «կանոնավոր» ժամերգությունները, որտեղ, սակայն, դրանց կազմակերպումը կախման մեջ էր դրվում իշխանությունների թույլտվությունից: Ի լրումն այդ արգելքների, 1934 թ. երկրորդ կեսից ի հայտ եկան նաև առաջին այսպես կոչված «Դեկլային սահմանափակումները», որոնցով միսիոներական կամ բարեգործական նպատակներով Գերմանիայից կանխիկ դրամի արտահանումն արգելվեց:<sup>119</sup> Այդպիսով ստեղծվեց մի իրավիճակ, որի հաղթահարումն այլևս անհնար էր թվում, և միայն Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի

<sup>115</sup> Stü Schäfer R., Mitteilungen, „Orient im Bild“, 1933, էջ 51: Յմնտ. Армяне-Арийцы (сборник монографий), Санкт-Петербург, 1995, էջ 6:

<sup>116</sup> Mitteilungen, „Orient im Bild“, 1931, էջ 63:

<sup>117</sup> Mitteilungen, անդ, 1933, էջ 64:

<sup>118</sup> Stü Ministerialerlaß über die Neuordnung des Kollektwesens, „Orient im Bild“, 1937, էջ 32:

<sup>119</sup> Schäfer R., Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission, „Orient im Bild“, 1935, էջ 10-11:

անսպառ նվիրումի և վճռականության շնորհիվ էր, որ դրանք նրա հայ պաշտպանյալների համար ճակատագրական չդարձան: Ընկերությունը չընկրկեց ստեղծված իրավիճակից և թույլատրելի բոլոր հնարավորությունների օգտագործման և, որ առավել ուշագրավ է, օրենսդրական խոչընդոտների բավական հնարամիտ շրջանցումների գնով կարողացավ շարունակել իր աշխատանքները: Եթե, օրինակ, իշխանությունների կողմից բարեգործական և միսիոներական կազմակերպությունների հանդեպ տարբերակցված մոտեցումներ էին դրսևորվում, ապա այն ձգտում էր հանդես գալ առավել մեղմ սահմանափակումների ենթակա կարգավիճակով:<sup>120</sup> Մեկ այլ դեպքում արգելքները շրջանցելու նպատակով բարեկամներին հրապարակայնորեն առաջարկվում էր նվիրատվությունները կատարել անդամավճարների անվան տակ:<sup>121</sup> Մամուլի, շրջիկ զեկուցումների, ֆիլմերի և թուղիկների միջոցով շարունակվեց նաև օգնության աշխատանքների պրոպագանդան:<sup>122</sup> Ինչ վերաբերում էր դեկլային արգելքներին, ապա ընկերությանն այլ ելք չէր մնում, քան դրամը վերածել ապրանքի և կատարել ապրանքային առաքումներ, որոնց վերաբերյալ սահմանափակումներ չկային: Այդպիսով հնարավոր դարձավ աշխատանքները շարունակել: Չալեպում 1935 թ. ընկերության միջոցներով այնտեղ խնամվում էին 122 «որբանոցային» և 95 «կերակրվող»:<sup>123</sup> 1936 թ. այդ հարաբերակցությունը կազմում էր 118 և 90,<sup>124</sup> իսկ 1937-38 թթ. խնամքի տակ էին գտնվում ընդհանուր թվով 200 երեխաներ:<sup>125</sup> Չատկանշական է, որ չնայած ծանր իրադրությանը, Չալեպի օգնության աշխատանքները միայն այդ ոլորտներով չսահմանափակվեցին: Ուժգնացող գործազրկության ու թանկացումների հետևանքով 1930-ական թթ. երկրորդ կեսին ծայրաստիճան սպառնալից իրադրություն ստեղծվեց նաև այնտեղի ճամբարաբնակ հայերի համար, և Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ն գործի դրեց իր բոլոր հնարավորությունները նրանց օգնություն ցուցաբերելու համար: Ենթադրվում մանրամասն պարզաբանվում են նաև այդ աշխատանքները, որոնք միաժամանակ մեկնարկվեցին երկու՝

<sup>120</sup> Stü Missionssammlungen sind erlaubt, „Orient im Bild“, 1934, էջ 19:

<sup>121</sup> Schäfer R., Sammelverbot, անդ, էջ 42-43:

<sup>122</sup> Unseren Freunden... „Orient im Bild“, 1937, էջ 12: Յմնտ. „Mitteilungen“, „Orient im Bild“, 1938, էջ 36:

<sup>123</sup> Schäfer R., Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission, „Orient im Bild“, 1936, էջ 18:

<sup>124</sup> Fleischmann P., Jahresbericht 1936 der Dr. Lepsius Deutschen Orient-Mission, „Orient im Bild“, 1937, էջ 18:

<sup>125</sup> Gaszcyk L., Weitere Bilder aus unserer Arbeit in Aleppo, „Orient im Bild“, 1939, էջ 21:

աննդամատակարարման և բուժապասարկման բնագավառներում անընդմեջ շարունակվելով մինչև 1939 թ.:<sup>126</sup> Ինչ վերաբերում է Կայա-Փունարի մասնաճյուղին, ապա այնտեղ 1934-38 թվականները հատկանշվեցին իբրև տեխնիկական սպառազինման և գյուղատնտեսության զարգացման տարիներ:<sup>127</sup> 1939 թ. զարմանը, սակայն, Ֆրանսիան Ալեքսանդրետի սանջակը զիջեց Թուրքիային, և հուլիսին որբանոցը ևս հարկադրված եղավ այնտեղից հեռանալ Քեսար:<sup>128</sup> Չնայած տեղական իշխանությունները խոստացան որբանոցի համար մի նոր հողակտոր հատկացնել, սակայն վերահաս աղետներն ի չիք դարձրեցին նաև այդ ծրագիրը: Իսկ երբ բռնկվեց երկրորդ աշխարհամարտը, Սիրիան որպես ֆրանսիական մանդատային տարածք Գերմանիայի համար դարձավ թշնամական երկիր, և Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի հետագա գործունեությունն այնտեղ այլևս անհնար դարձավ: Ի լրումն դրա ամբողջովին խզվեց նաև ընկերության կապը մասնաճյուղերի հետ, որոնք հայտնվեցին մեկուսացման մեջ: Կայա Փունարի մասնաճյուղի աշխատակիցները ծանր փորձությունների գնով ի վերջո կարողացան վերադառնալ Գերմանիա,<sup>129</sup> իսկ Չալեպի մասնաճյուղի հետ, հակառակ բոլոր ջանքերին, կապն այլևս չվերականգնվեց, և նրա աշխատակիցների ու սաների ճակատագիրն այդպես էլ մնաց անհայտ:<sup>130</sup> Ստեղծված իրավիճակում բնականաբար Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի հիմնական խնդիրը դարձավ բարեկամների հետ կապի պահպանումն իբրև ապագայում աշխատանքների վերսկսման հիմնական նախադրյալ: Ատենախոսությունում մանրամասն լուսաբանվում են դրան նպատակաուղղված ընկերության ձեռնարկումներն, ինչպես և վերջինիս հայանպաստ հրապարակախոսական գործունեությունը, որը, չնայած թղթի օգտագործման պետական սահմանափակումներին, հաջողվեց շարունակել մինչև 1943 թ.: 1943 թ. հրապարակվեց և բարեկամներին առաքվեց նաև «Geschäftsbericht 1942/1943 der Dr. Lepsius' Deutschen Orient-Mission» անվանումը կրող մի տեղեկագիր, որը դարձավ Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի կենդարյա գոյության և անխոնջ հայանպաստ գործունեության վերջին արգասիքը:<sup>131</sup> Գերմանիայի մեծացող ռազմական անհաջողությունների և երկրում ուժգնացող սոցիալ-տնտեսական ճգնաժամի պայմաններում ընկերությունը 1943

<sup>126</sup> Gaszczuyk L., Bilder aus unserer Arbeit in Aleppo, „Orient im Bild“, 1939, էջ 17-18:

<sup>127</sup> Kavoukdjian A., Aus Kaja Punar, „Orient im Bild“, 1935, էջ 25-26:

<sup>128</sup> Անդ:

<sup>129</sup> Schneider G., Halbmond über dem Kreuz, „Orient im Bild“, 1939, էջ 41-42:

<sup>130</sup> Fleischmann P., Gott sitzt im Regimente, „Orient im Bild“, 1939, էջ 37:

<sup>131</sup> S'tu Geschäftsbericht 1942/1943 der Dr. Lepsius' Deutschen Orient-Mission:

թ-ից այլևս չկարողացավ իր գոյամարտը շարունակել և ծուլվեց Բեռլինի ավետարանական միսիոներական ընկերությանը:

Վերջաբանում հանրագումարի են բերված ատենախոսության հիմնական եզրակացություններն ու արդյունքները:

Ատենախոսության հիմնադրույթները շարադրված են հեղինակի հետևյալ հրապարակումներում

#### Մենագրություններ

1. Հայրունի Ա., Յոհաննես Լեփսիուս. Հայանվեր գործիչն ու հրապարակախոսը, Երևան, «Միտք» հրատ., 2001 (136 էջ):
2. Հայրունի Ա., Յոհաննես Լեփսիուսի առաքելությունը, Երևան, «Նաիրի» հրատ., 2002 (544 էջ):

#### Յոդվածներ և այլ աշխատություններ

1. Deutschland, Armenien und die Türkei 1895-1925, Dokumente und Zeitschriften aus dem Dr. Johannes-Lepsius-Archiv, München, 1998, Teil 3, էջ 537-622:
2. Դր. Յոհաննես Լեփսիուսի «Գերմանական առաքելություն Արևելքում» կազմակերպությունը և Հայաստանը: «Բանբեր Երևանի համալսարանի», N 1., Երևան, 1999, էջ 149-156:
3. Հայ ժողովրդի քաղաքական դրությունը և Հայկական հարցը Յոհ. Լեփսիուսի հետպատերազմյան հրապարակախոսության մեջ (1918-1926 թթ), «Իրան-Նամե», հ. 37, Երևան, 2001, էջ 12-20:
4. Die publizistische und organisatorische Tätigkeit der Dr. Lepsius' Deutschen Orient-Mission für Armenien unter dem nationalsozialistischen Regime (1933-1938), «Քրիստոնյա Հայաստանը քաղաքակրթությունների խաչմերուկում» միջազգային գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներ, Երևան, 2001, էջ 61-64:

5. Յոհաննես Լեփսիուսի առաքելության վերջին պայքարն ու ձեռքբերումները, «Պատմա-քանասիրական հանդես», 1(159), Երևան, 2002, էջ 29-49:
6. Կարեն Յեպեի և «Դր. Լեփսիուսի արևելյան առաքելության» համապարփակ հայանվեր գործունեությունը Հալեպում 1923-1933 թթ., «Կանթեղ», N 6, Երևան, 2002, էջ 149-159:
7. Յոհաննես Լեփսիուսի հայանպաստ գործունեության գնահատականի հարցի շուրջ, «Պատմություն», N 1, Երևան, 2002, էջ 92-102:
8. Հայաստանում գործող առաքելություն, որը մերժում էր քարոզչությունը, «Կանթեղ», N 1, Երևան, 2003, էջ 141-150:
9. Դր. Յոհ. Լեփսիուսի հայանվեր հրապարակախոսական և կազմակերպական գործունեությունն առաջին աշխարհամարտի տարիներին, «Էջմիածին», Էջմիածին, 2003, Գ -Դ, էջ 135-144:

АЙРУНИ АШОТ НОРАЙРОВИЧ

ДЕЯТЕЛЬНОСТЬ ОБЩЕСТВА ИОГАННЕСА ЛЕПСИУСА  
"ГЕРМАНСКАЯ МИССИЯ НА ВОСТОКЕ" В ПОМОЩЬ  
АРМЯНАМ

Диссертация на соискание ученой степени доктора исторических наук по специальности 07.00.02 "Общая история". Защита состоится 23 июня 2003 года в 13.00 по адресу пр. Баграмяна 24 г. на специализированном совете института Востоковедения Национальной Академии Наук РА.

Р Е З Ю М Е

Впервые в диссертации всесторонне научно исследуется и полностью освещается посвященная армянам деятельность Иоганнеса Лепсиуса и созданного им общества "Германская миссия на востоке", которая начиная с 1895г. непрерывно велась и продолжалась до 1943г. Труд, через который первый раз в научный оборот вводится множество ценных первоисточников, состоит из предисловия, трех глав, послесловия и списка использованных источников и литературы.

В предисловии обоснованы актуальность и злободневность проблемы, научная новь и практическое значение, намечены цели исследования, дана степень изучения вопроса.

В 1-ой главе, носящей заглавие "Организационная и трудовая летопись общества до 1-ой мировой войны (1895-1914гг.)", освещается деятельность Лепсиуса и его общества до войны. Она имела многослойный и строго объемлемый облик: развертывание опекунских работ, создание производственных предприятий и рабочих мест, комплексное безвозмездное медобслуживание, горячая литборьба против укорененных в Германии антиармянских восприятий, последовательная пропаганда для формирования общественного мнения в помощь армянам и всестороннего освещения господствующей в Армении обстановки,

публичная защита Армянского вопроса, прав армянского народа в Германии и Европе, ценный литературно-культурный обмен. Необходимо отметить, что проделанная в Германии и филиалах работа определенных периодов освещается параллельно, что помогает не только сохранить хронологическую последовательность, но и по возможности делать восприимчивым обоюдные происходящие взаимоотношения развитий и внутренние причинноследственные связи.

2-ая глава, озаглавленная "В пучине мировой войны (1914-1918гг.)", посвящена проделанной в годы мировой войны работе. Деятельность Лепсиуса и его сотрудников в этот период характеризуется усилиями, с одной стороны, приостановить истребление армянского народа и с этой целью сплотить немецкие и европейские влиятельные общественные силы для активного вмешательства немецкого правительства в этот вопрос, и, с другой стороны, создать условия существования для скапливаемых с конца 1916г. в крупных городах Турции многотысячных армянских сирот и женщин, переживших ссылку.

3-ья глава — "Деятельность Иоганнеса Лепсиуса и его организации после первой мировой войны (1918-1943гг.)" освещает работу Лепсиуса и его общества в период от 1919г. до 1943 г., которая также строго разнородна: основание приютов, освобождение похищенных магометанами во время Большого геноцида детей и женщин, медобслуживание, создание рабочих мест, материальная помощь бедным семьям, жилищное строительство, опекунов над бедными, основание новых поселений, переселение. Всему этому постоянно сопутствовала другая, разрастающаяся борьба Лепсиуса и его товарищей на публицистическом фронте, где представляя всемирной общественности реальную картину происшедших в Армении событий, старались вновь достичь справедливого решения Армянского вопроса, ставшего предметом международного обсуждения.

В послесловии подведены итоги основных заключений и результатов диссертации.

